«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ԿԱՊԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2025

ՆԱԽԱԲԱՆ

Կապանի պետական բժշկական քոլեջի (այսուհետ՝ ԿՊԲՔ, ՄՈՒՀ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (կամ ՄՈՒՀ-ի անվանումը) ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձնահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 6
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 12
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 12
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 12
ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 15
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 15
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 18
III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 22
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 27
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 31
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 34
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 36
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 41
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 43
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 46
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 51
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 52
ՆՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 52
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 53
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 54
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 56
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 57
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 58

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

Այս բաժնի նպատակն է ծանոթացնել ընթերցողին ՄՈՒՀ-ի գործունեության համատեքստին՝ տրամադրելով տեղեկատվություն գործունեության միջավայրի, կրթական ծրագրերի և գնահատման գործընթացը պայմանավորող այլ առանցքային ուղղությունների մասին: Չափանիշներում ներկայացվող փաստերն ու դատողությունները կառուցվել են՝ հաշվի առնելով ՄՈՒՀ-ի գործունեության արտաքին համատեքստը և ներքին միջավայրը:

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը.

Կապանի պետական բժշկական քոլեջը հիմնադրվել է 1960թ. հուլիսին: Մինչև 1961թ. սեպտեմբերի 29-ը այն գործել է որպես Երևանի բժշկական ուսումնարանի Ղափանի մասնաճյուղ: Համաձայն ՀՍՍՀ Մինիստրների սովետի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության կոմիտեի 29.09.1961թ N390 հրամանի, առանձնացվել է և դարձել ինքնուրույն ուսումնարան: 1968թ. Հանրապետության բժշկական ուսումնարանները հանձնվեցին ՀՍՍՀ առողջապահության մինիստրության ենթակայությանը: 1992թ հոկտեմբերից ուսումնարանը վերակազմավորվել է որպես «Կապանի բժշկական ուսումնարան» պետական ՓԲԸ: ՀՀ կառավարության N1009-Ն որոշման 5-րդ կետի և ՀՀ առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի դ) ենթակետի (N433-Ա 27.04.2004թ) համաձայն Կապանի բժշկական ուսումնարանը 26.05.2004թ-ին վերանվանվել է Կապանի պետական բժշկական քոլեջ ՊՈԱԿ[1]:

2013թ. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ լիազորված պետական կառավարման մարմինը հանդիսանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, որը 02.12.2019թ-ից վերանվանվել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

Քոլեջն առաջին անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրում:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

Համաձայն «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություն» փաստաթղթի՝ մարզի զարգացման հիմնական գերակայություն է առողջապահական ծառայությունների հասանելիության բարելավումը, սոցիալական ներառումը, ինչպես նաև զբաղվածության խթանումը[2]: Դիտարկելով քոլեջի կրթական ծրագրերի համապատասխանությունը մարզի կարիքներին, նշենք, որ քոլեջում իրականացվում են հետևյալ մասնագիտությունները՝ «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ», «Դեղագործություն». Այս կրթական ծրագրերը նպաստում են առողջապահական համակարգի միջին մակարդակի մասնագետների պատրաստմանը, ինչը համապատասխանում է մարզում առողջապահական ծառայությունների պահանջներին:

- «Ատամնատեխնիկական գործ», «Բուժական կոսմետոլոգիա». Դրանք ուղղված են մարզում ստոմատոլոգիական և կոսմետոլոգիական ծառայությունների որակի բարելավմանը:
- «Սոցիալական աշխատանք». Մասնագիտությունը կարևոր է մարզում սոցիալական ներառման խնդիրների լուծման և խոցելի խմբերին աջակցելու համար:
- Նոր ներդրված ծրագրեր՝ «Բուժական մերսում» և «Լաբորատոր ախտորոշում». Այս ծրագրերը լրացնում են առողջապահական ծառայությունների համակարգը՝ խթանելով ֆիզիոթերապիայի և ախտորոշման հնարավորությունները:

[1] ԿՊԲՔ-ի ինքնավերլուծություն, էջ 5

[2] ՀՀ Սյունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություն, http://syunik.mtad.am/files/docs/29670.pdf, էջ 29-43

Այս ծրագրերի ներդրումը համապատասխանում է մարզի զարգացման ռազմավարական ուղղություններին՝ ապահովելով մարդկային ռեսուրսների զարգացում և նպաստելով մարզի առաջնահերթ խնդիրների լուծմանը:

Քոլեջում հիմնական և միջնակարգ կրթության հիմքով սովորում է 136 ուսանող: Ներկայումս քոլեջում դասավանդում է 31 դասախոս, որոնցից 26-ը ունեն բարձրագույն կրթություն, իսկ 5-ը՝ միջին մասնագիտական: Ներկայումս քոլեջի թվով 10 դասախոսներ գործատուներ են, իսկ տարբեր տարիների շրջանավարտներից 8-ը դասավանդում են քոլեջում: 2023-2024 ուսումնական տարում շրջանավարտների 40%-ը աշխատանքի է անցել հենց նրա ուղորդմամբ:

Քոլեջին «Քույրական գործ», «Դեղագործություն», «Մանկաբարձական գործ», «Բուժական կոսմետոլոգիա», «Ատամնատեխնիկական գործ», մասնագիտությունների ընդունելության համար յուրաքանչյուր տարի հատկացվում են 25 լիցենզիոն տեղեր, «Սոցիալական աշխատանք», «Բուժական մերսում»՝ 20 լիցենզիոն տեղեր, իսկ «Լաբորատոր ախտորոշում» ՝ 10: «Ատամնատեխնիկական գործ», «Բուժական կոսմետոլոգիա», «Մանկաբարձական գործ», «Բուժական մերսում», «Լաբորատոր ախտորոշում» և «Դեղագործություն» (առկա) մասնագիտություններով քոլեջը ներկայումս դիմորդներ չունի:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Կապանի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջը առաջին անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրում:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որի առաքելությունն է՝ «Ապահովել հիմնարար և կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով օժտված առողջապահության և սոցիալական աշխատանքի ոլորտների, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մրցունակ և որակյալ մասնագետների պատրաստումը, ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով կրթության կազմակերպումը անձի հոգևոր զարգացման պահանջմունքների բավարարումը»:

Քոլեջը Կապան քաղաքում և տարածաշրջանում ունի եզակի դերակատարություն միջին մասնագիտական բժշկական կադրերի պատրաստման գործում, ինչը կիսում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցները: Սակայն ընդունելության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա են ընդունելության նվազման միտումներ, որոնք հիմնականում պայմանավորված են տարածաշրջանի դեմոգրաֆիկ խնդիրներով: Արդյունքում, որոշ մասնագիտություններ արդեն չեն համալրվում օրենքով սահմանված նվազագույն շեմով, ինչը ստեղծում է ռիսկային իրավիճակ քոլեջի համար և կարող է բացասաբար ազդել նաև գործող մասնագիտությունների կայունության վրա:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ ստեղծված իրավիճակը պահանջում է վերադաս մարմնի ուշադրությունը, և հնարավոր արտոնությունների սահմանումը կարող է օգնել քոլեջին հաղթահարել ընդունելության հետ կապված խնդիրները: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է զարգացնել մասնագիտական կողմնորոշման աշխատանքները, ինչը կնպաստի ուսանողների ներգրավվածության աճին: Խնդիրը հատկապես կարևոր է տեղի աշխատաշուկայում պահանջված միջին բժշկական որակավորմամբ մասնագետների պատրաստման տեսանկյունից, մասնավորապես՝ ատամնատեխնիկների, մանկաբարձների և այլ ոլորտի մասնագետների պատրաստման առումով:

Քոլեջի կառավարման համակարգի վերլուծությունը ցույց է տալիս, որ ստեղծված է որոշումների ընդունման բազմաշերտ կառուցվածք, սակայն որի արդյունավետությունը հստակ տեսանելի չէ: Քոլեջի ընթացիկ կառավարումն իրականացվում է տնօրենի, Կառավարման, Մանկավարժական և Տնօրենական խորհուրդների կողմից, իսկ գործընթացների համակարգման նպատակով գործում են նաև դաստիարակչական, ուսումնամեթոդական, գրադարանային, ուսանողական խորհուրդները, ինչպես նաև մի շարք հանձնաժողովներ և ենթակառուցվածքներ: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս խորհուրդներում, հանձնաժողովներում և ենթակառույցներում ներգրավված են հիմնականում նույն անձինք՝ տնօրենը, ուսումնական գծով փոխտնօրենը, մեթոդիստը, ամբիոնների վարիչները, որակի ապահովման պատասխանատուն, կարիերայի ուղղորդման պատասխանատուն, ուսանողական խորհրդի նախագահը և այլ աշխատակիցներ: Այս հանգամանքը հանգեցնում է աշխատանքային գերբեռնվածության,

վարչական աշխատակիցների բազմակի ներգրավվածության և որոշումների իրականացման արդյունավետության նվազման։

Դրական է, որ քոլեջը իրականացնում է երկարաժամկետ ռազմավարական պլանավորում։ Նախորդ ռազմավարական շրջափուլից հետո կառավարման գործիքակազմում տեղի են ունեցել որոշ բարեփոխումներ, ինչպես նաև ՌԾ-ը մշակելիս հաշվի են առնվել շահակիցների կարծիքները։ Այնուամենայնիվ, ՌԾ-ի նպատակներն ու խնդիրները դեռևս հստակ փոխկապակցված չեն, որոշ դեպքերում առկա են նպատակներից բխող այլ նպատակներ, ինչը խոչընդոտում է ծրագրի իրականացման հստակ պլանավորումը։ Բացի այդ, ՌԾ-ի որոշ ռազմավարական ուղղություններ համընկնում են, ինչը հանգեցնում է մասնատված և կրկնվող նպատակների ձևավորմանը։

Չնայած քոլեջն ունի ՌԾ առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ, սակայն դրանք չափելիության խնդիր ունեն և չեն նպաստում ՌԾ-ի իրականացման արդյունավետության գնահատմանը։ ՌԾ-ի նպատակների և ՌԾ պլան-ժամանակացույցի միջև խզված կա, այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է, որ ՌԾ պլան-ժամանակացույցը ապահովի ռազմավարական ծրագրի փուլային իրականացումը, ինչը հնարավոր կլինի պատասխանատուների, ժամկետների, ակնկալվող չափելի արդյունքների և անհրաժեշտ ռեսուրսների հստակ պլանավորման պարագայում։

Միևնույն ժամանակ, ստորաբաժանումների պլանները հստակ փոխկապակցված չեն ՌԾ պլանավորման հետ, ինչը սահմանափակում է ռազմավարական պլանավորման արդյունավետ իրականացումը և դրա դիտարկումը որպես կառավարման իրական գործիք։

Քոլեջում տվյալահենք կառավարման համակարգը դեռևս զարգացման փուլում է և չունի բավարար համակարգվածություն՝ կառավարչական որոշումների արդյունավետ ընդունման համար։ Որակի ապահովման համակարգը գտնվում է ձևավորման փուլում, քոլեջը որոշակի աշխատանքներ է իրականացրել փորձելով ներդնել որակի ապահովման աշխատանքների միանձնյա և կոլեգիալ իրականացման համակարգ, այդուհանդերձ ապահովված չէ որակի ներքին ապահովման համակարգի անկախությունը։ Վարչական աշխատակիցները ներգրավված են որակի ապահովման ենթակառույցում, ինչը խոչընդոտում է կառավարման համակարգի օբյեկտիվ գնահատմանը և բարելավմանը։ ՈԱ համակարգը հիմնականում դիտարկվում է հարցումների միջոցով շահակիցների գոհունակության և կարիքների գնահատման միջոց, որոշակի վերահսկողական գործառույթների համատեղմամբ։ Մինչդեռ անհրաժեշտ է, որ ՈԱ համակարգը հանդիսանա ռազմավարական պլանավորման գործիք, ապահովելով ՊԻԳԲ շրջափուլը բոլոր գործընթացներում։ Այս տեսանկյունից կարևորվում է կառուցվածքային փոփոխությունների իրականացումը, որոնք կնպաստեն կառավարման համակարգի առավել արդյունավետ կազմակերպմանը, ՈԱ համակարգի անկախությանը և գործառնական կապերի հստակեցմանը։

Կապանի պետական բժշկական քոլեջում որակավորումների արժանահավատ շնորհումը հիմնված է պետական կրթական չափորոշիչներին համապատասխան իրականացվող ՄԿԾ-ների վրա։ Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջում առկա է պրակտիկ ոլորտի հետ ձևավորված համագործակցային միջավայր։ Քոլեջը ներգրավել է պրակտիկ ոլորտի դասավանդողներին, որոնք ուսանողներին ծանոթացնում են իրական աշխատանքային միջավայրին և տրամադրում ոլորտային առաջադրանքներ, ինչը նպաստում է նրանց մասնագիտական պրակտիկ կարողությունների զարգացմանը։ Գործնական հմտությունները ստուգվում են համապատասխան մասնագիտական միջավայրում, որն ապահովվում է քոլեջի լաբորատորիաների և գործատուների ռեսուրսների միջոցով։

Այդուհանդերձ, քոլեջի համար կարևոր է հստակ ձևակերպել կրթական ծրագրերի վերջնարդյունքները, ապահովելով դրանց համապատասխանությունը մասնագիտական գործունեության առանձնահատկություններին և աշխատաշուկայի պահանջներին։ Անհրաժեշտ է ստեղծել արդյունավետ մեխանիզմներ, որոնք կերաշխավորեն վերջնարդյունքների

փոխկապակցումը գործատուների պահանջների հետ՝ ապահովելով շրջանավարտների մրցունակությունը: ՄԿԾ-ների բարելավմանը նպաստող մեխանիզմների ներդնումը, ինչպես մշտադիտարկման և բենչմարքինգի գործիքակազմը, թույլ կտա ապահովել ՄԿԾ-ների շարունակական զարգացումը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու և ուսանողների մասնագիտական պատրաստվածությունը բարձրացնելու նպատակով:

Հարկ է նշել, որ քոլեջի խոշոր ձեռքբերումներն են դասավանդման բարձր որակը և գործատուի ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, սակայն որոշ ծրագրերում դեռևս կա աշխատանքային միջավայրի հետ առավել խորացված կապի անհրաժեշտությունը: Դասավանդողների մասնագիտական զարգացման ուղղությամբ իրականացվում են որոշակի քայլեր, մասնավորապես տրվում է մեթոդական աջակցություն: Քոլեջում ձևավորված է նաև սկսնակ դասավանդողների աջակցության պրակտիկան՝ հիմնված փոխադարձ դասալսումների արդյունքների վրա: Փորձագիտական խումբը կարևորում է նաև մասնագիտական զարգացման և վերապատրաստման միջոցառումների նախաձեռնումը քոլեջի կողմից, որը կարող է իրականացվել գործատու ոլորտի հետ համագործակցության և փորձի փոխանակման միջոցով:

Անդրադառնալով քոլեջի ռեսուրսային բազային, հարկ է նշել, որ առկա է շենքի հիմնանորոգման կարիք, որը պահանջում է զգալի ֆինանսական ներդրումներ: Միևնույն ժամանակ, քոլեջի ֆինանսական ռեսուրսները կախված են ուսանողական համակազմի թվաքանակից: Այս տեսանկյունից քոլեջը չի կարողանում լիարժեք իրացնել իր հնարավորությունները՝ բոլոր կրթական ծրագրերով հավաքագրել ուսանողներ: Այդուհանդերձ, իրականցվում են քայլեր ֆինանսական միջոցների բազմազանեցման համար՝ կարճաժամկետ ծրագրեր, դրամաշնորհային միջոցների և լրացուցիչ ֆինանսների ներգրավման ուղղությամբ քայլեր:

Քոլեջը ձեռնարկել է քայլեր ուսանողների հետազոտական գործունեությունը խթանելու ուղղությամբ՝ մշակելով համապատասխան քաղաքականություններ և կանոնակարգեր, ինչպես նաև ներգրավելով հետազոտական բաղադրիչներ ուսումնական գործընթացում: Ուսումնական առաջադրանքներում ընդգրկված են վերլուծական և ստեղծագործական կարողությունների զարգացմանն ուղղված բաղադրիչներ, ինչը նպաստում է ուսանողների քննադատական մտածողության ձևավորմանը: Այնուամենայնիվ, հետազոտական աշխատանքների գնահատման հստակ մեթոդաբանության բացակայությունը և դասախոսական կազմի հետազոտական գործունեության սահմանափակ հնարավորությունները խոչընդոտում են հետազոտության և ուսումնառության արդյունավետ փոխկապակցմանը:

Քոլեջը ներդրել է մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս ճանաչել ուսանողների կրթական կարիքները և բարելավելու ուսումնական միջավայրը՝ հիմնված ուսանողների մասնակցության վրա: Որոշակիորեն ձևավորված է ուսանողական ինքնավարությունը, միևնույն ժամանակ քոլեջը ցուցաբերում է անհրաժեշտ աջակցություն ուսանողական նախաձեռնությունների իրականացման համար: ՄՈՒՀ-ը նաև ապահովում է ուսանողների ծանոթությունը կարիերայի հնարավորություններին և հետևում է շրջանավարտների հետագծին՝ արդյունքները օգտագործելով կրթական ծրագրերի շարունակական բարելավման համար:

Հասարակական պատասխանատվության շրջանակներում ՄՈՒՀ-ն իրացնում է իր առաքելությունը՝ փոխանցելով արժեքներ և գիտելիքներ հասարակության լայն շերտերին: Քոլեջը կազմակերպում է տարբեր միջոցառումներ և նախաձեռնություններ, որոնք նպաստում են հասարակության կրթական մակարդակի բարձրացմանը և տեղական համայնքների զարգացմանը: Քոլեջը հետադարձ կապ է ապահովում ներքին և արտաքին շահակիցների համար ֆեյսբուքյան էջի միջոցով, սակայն համեմատաբար թույլ է զարգացած գործընթացների հրապարակայնության և թափանցիկության մեխանիզմները՝ հիմնված ներքին և արտաքին հաշվետվողականության վրա:

Հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի առկայությունը, կարող է նպաստել հաշվետվողականության արդյունավետության բարձրացմանը:

ՄՈՒՀ-ը նաև ակտիվորեն համագործակցում է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային գործընկերների հետ: Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը ունի իր միջազգայնացման տեսլականը և իրականացնում է այդ ուղղությամբ որոշակի քայլեր: Ներկա փուլում գործընթացների արդյունավետությունը կախված արտաքին կապերի ապահովման պատասխանատուների հստակեցումից, ինչը կնպաստի պայմանագրերի և հուշագրերի շրջանակներում առավել համակարգված գործընթացների իրականացմանը: Միջազգայնացման գործընթացներում կարևոր է դասախոսների և ուսանողների լեզվաիմացության մակարդակի բարձրացումը, որը իրատեսական կդարձնի քոլեջի հեռահար նպատակները:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) տեղի աշխատաշուկայում շրջանավարտների պահանջվածությունը,
2) գործատու ոլորտից ներգրավված փորձառու մասնագետները և գործատուների հետ ռեսուրսների համատեղ կիրառությունը,
3) կարճաժամկետ ծրագրերի իրականացման հնարավորությունները (բավարար ռեսուրսների առկայությունը) և պահանջարկը գործատու ոլորտի կողմից,
4) կարիերային նպաստող ծառայությունների առկայությունը,
5) համագործակցային կապերի լայն շրջանակը, որը նպաստում է քոլեջի զարգացմանը
6) հասարակության հետ հետադարձ կապի կայուն մեխանիզմների առկայությունը,
7) հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցմանը նպաստող մշակույթի ձևավորված լինելը:

Հաստատության թույլ կողմերն են.

1) ռազմավարական ծրագրի պլանավորման, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմների թերի ձևավորվածությունը,
2) ստորաբաժանումների աշխատանքային պլանների և Ռազմավարական ծրագրի փոխկապակցված չլինելը,
3) հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի թերի կիրառությունը,
4) դասախոսների մասնագիտական զարգացման հնարավորությունների սահմանափակ լինելը,
5) ոչ բոլոր ՄԿԾ-ներով ընդունելության տեղերի համալրումը,
6) մասնաշենքերի ֆիզիկական մաշվածությունը (հիմնանորոգման անհրաժեշտությունը)
7) որակի ապահովման համակարգի ոչ անկախ դիրքը, և կենտրոնացվածությունը միայն կրթական գործընթացների շուրջ,
8) որակի մշակույթի տարածման դանդաղ տեմպերը:

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1. Վերանայել ՌԾ ոլորտային ուղղությունները, սահմանելով հստակ և արդյունքահենք նպատակներ ու խնդիրներ,
2. վերամշակել ՌԾ-ի առաջընթացի գնահատման առանցքային ցուցիչները(ԳԱՑ-երի), փոխկապակցելով դրանք սահմանված նպատակների և խնդիրների հետ, ապահովել ցուցիչների քանակական և որակական հստակ, չափելի բնութագրիչները,

3. վերանայել քոլեջի կազմակերպական կառուցվածքը՝ հստակեցնել ուղղահայաց և հորիզոնական կապերը, ապահովել կառավարման օղակների միջև վերևից ներքև և ներքևից վերև հաշվետվողականությունը՝ բացառելով գնահատողների կատարողների գործառութային կրկնությունները։
4. փոխկապակցել երկարաժամկետ (ՌԾ-ն և ՌԾ պլան-ժամանակացույցը) և կարճաժամկետ պլանավորման փաստաթղթերի (ստորաբաժանումների տարեկան պլանների) հետ, հստակեցնել ՌԾ իրականացման պատասխանատուներին (ղեկավարներ, ստորաբաժանումներ),
5. ապահովելով ՌԾ-ի նպատակների և խնդիրների իրականացման գործընթացի և ստորաբաժանումների հաշվետվությունների միջև հստակ փոխկապակցվածություն՝ ներառելով վերլուծական բաղադրիչներ, որոնք հիմնված են ՌԾ-ի ԳԱՑ-երի վրա,
6. ապահովելով կոլեգիալ կառավարման օղակներում ներքին և արտաքին շահակիցների ակտիվ ներգրավումը, դիտարկել խորհուրդների, հանձնաժողովների և ենթակառույցների օպտիմալացումը,
7. բարելավել և բազմազանեցնել քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության և տարբեր գործընթացների արդյունավետության, տեղեկատվության հավաքագրումը վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմները,
8. ապահովել Որակի ներքին ապահովան համակարգի անկախությունը և պլանավորված զարգացումը՝ որպես ռազմավարական պլանավորման բաղկացուցիչ մաս, նպաստելով որակ մշակույթի ձևավորմանը,
9. վերանայել որակի ապահովման պատասխանատուի դերն ու գործառույթները՝ բացառելով գնահատողի և կատարողի պարտականությունների համադրման կրկնությունը,
10. կատարելագործել հարցումների մեթոդաբանությունը՝ ապահովելով պարբերականություն, տվյալահենք վերլուծություն և արդյունքների կիրառելիություն։

Որակավորումների արժանահավատ շնորհում

11. Մշակել և ներդնել ՄԿԾ-ների վերջնարդյունքները՝ համապատասխանեցնելով աշխատաշուկայի պահանջներին՝ ապահովելով հստակ փոխկապակցում ուսումնառության արդյունքների հետ,
12. ներդնել ուսանողների գնահատման միասնական համակարգ, որը կներառի բազմագործոն գնահատման չափանիշներ՝ ապահովելով դրանց համապատասխանությունը ուսումնական վերջնարդյունքներին և ակադեմիական ազնվության սկզբունքներին,
13. իրականացնել ՄԿԾ-ների համեմատական վերլուծություններ (բենչմարքինգ) տեղական և միջազգային ՄՈՒՀ-երի հետ, ուսումնասիրել և տեղայնացնել լավագույն փորձը,
14. բազմազանեցնել կրթական ծրագրերի մշտադիտարկման և արդյունավետության գնահատման մեխանիզմներն ու գործիքակազմը,
15. մշակել դասախոսների մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ համադրելով դրանք կրթական ծրագրերի առանձնահատկությունների հետ, ինչպես նաև շարունակաբար իրականացնել երիտասարդ կադրերի ներգրավման քաղաքականություն, ներառելով նաև պրակտիկ ոլորտից մասնագետներ,
16. կազմակերպել գործատուների հետ համատեղ վերապատրաստումներ և փորձի փոխանակումներ՝ նպաստելով դասախոսների մասնագիտական զարգացմանը և աշխատաշուկայի հետ կապի ամրապնդմանը,

17. հստակեցնել ու համակարգել դասախոսների գնահատման մեխանիզմները, դրանք փոխկապակցելով դասախոսների մասնագիտական զարգացմանն ուղղված միջոցառումների հետ։
18. կանոնակարգել սկսնակ դասախոսների ներգրավման և աջակցության գործընթացները՝ մշակելով և ներդնելով համապատասխան ընթացակարգեր,
19. բազմազանեցնել ֆինանսական միջոցների այլընտրանքային աղբյուրները, այդ թվում խթանել դրամաշնորհային ծրագրերի մասնակցությունը
20. ընդլայնել գործընկերային բազաների հետ համագործակցությունը տարբեր ՄԿԾ-ների համար ներդնելով ռեսուրսների համատեղ օգտագործման ինստիտուցիոնալ մոտեցում, ինչպես նաև շարունակաբար բարելավել ՄԿԾ-ների իրականացման ռեսուրսային բազան և գրադարանային ենթակառուցվածքները։
21. ներդնել տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու համակարգ, ուշադրության դարձնելով ժամանակակից ՏՀՏ միջոցների կիրառելիությանը։

Երկարաժամկետ զարգացում

22. Ընդլայնել ուսանողների հավաքագրման և ընտրության մեխանիզմները։
23. Բազմազանեցնել և հստակեցնել ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմները։
24. Մշակել և ներդնել ՄՈՒՀ-ի առաջնահերթությունները հետազոտական ոլորտում և ուսանողների և դասախոսների հետազոտական գործունեությունը խթանող և խրախուսող ընթացակարգերը և մեխանիզմները։
25. Բարելավել և ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմները՝ ապահովելով հետազոտական բաղադրիչի առկայությունը բոլոր կրթական ծրագրերում։
26. Ներդնել ներքին և արտաքին հաշվետվողականության թափանցիկության ապահովման մեխանիզմները՝ գործարկելով քոլեջի կայք էջը, ապահովելով գործընթացների հասանելիությունը հասարակությանը և գործընկերներին։
27. Հստակեցնել արտաքին կապերի ապահովման (նաև միջազգայնացման) գործընթացները՝ ղեկավարող օղակը, պատասխանատուների շրջանակները, համապասխանեցնելով փաստաթղթային հենքը քաղաքականությունը և ընթացակարգերը։
28. Ներդնել ներքին շահակիցների օտար լեզվի իմացության մակարդակը բարելավող գործուն մեխանիզմներ։

_____

Փորձագիտական խմբի ղեկավար
Ասյա Սիմոնյան

17 մարտի, 2025 թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Կապանի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[3] կողմից.

1. **Ասյա Սիմոնյան՝** մանկավարժական գիտությունների թեկնածու, Շիրակի պետական համալսարանի դասախոս, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Լուսինե Մանուչարյան՝** Երևանի հենակետային բժշկական քոլեջի մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման պատասխանատու, փորձագիտական խմբի անդամ,
3. **Ռուզաննա Խուրշուդյան՝** Շիրակի պետական համալսարանի և Գյումրու պետական բժշկական քոլեջի դասախոս, փորձագիտական խմբի անդամ,
4. **Ալլա Նիկողոսյան՝** Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ, Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ **Լիանա Ալավերդյանը**:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Կապանի պետական բժշկական քոլեջի պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 02.03.2024թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո 02.05.2024թ. ԿՊԲՔ-ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈԱԱԿ–ը փետրվար ամսին 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել: Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող ուսումնական հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն:

Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ:

Կապանի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների վերանայված ինքնավերլուծությունը ներկայացվել է 22.05.2024թ.-ին: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[4]:

Նախնական այց

21.10.2024թ. առցանց հանդիպում է տեղի ունեցել Կապանի պետական բժշկական քոլեջի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել հոկտեմբերի 28-ից 30-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, ռեսուրսների[5] և փաստաթղթերի[6] դիտարկում և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

---

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

[5] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

[6] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին 28.02.2025թ.–ին: Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջն արձագանք չի ներկայացրել: Փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 17.03.2025թ.-ին:



Համակարգող
Լիանա Ալավերդյան

17 մարտի, 2025 թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

«Կապանի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության առաքելությունը ձևակերպված է 2022-2027թթ. Ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ՌԾ): Քոլեջի առաքելությունն է՝ «Ապահովել հիմնարար և կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով օժտված առողջապահության և սոցիալական աշխատանքի ոլորտների, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մրցունակ և որակյալ մասնագետների պատրաստումը, ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով կրթության կազմակերպումը անձի հոգևոր զարգացման պահանջմունքների բավարարումը»: Քոլեջը միջին մասնագիտական կրթություն է կազմակերպում ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխան: Զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված են. քոլեջի տեսլականը, ռազմավարական զարգացման շարժիչ ուժերը, քոլեջի առկա վիճակը և վերլուծությունը, SWOT վերլուծությունը, ռազմավարական հիմնախնդիրները, նպատակները և նրանց լուծման ուղիները:

Քոլեջի ՌԾ-ի հիմնական ուղղություններն են՝ ուսանողական համակազմ, կրթական գործունեություն, կառավարման համակարգ, մարդկային ռեսուրսներ, շենքային պայմաններ և նյութատեխնիկական բազա, ֆինանսատնտեսական գործունեություն, կարիերայի կառավարում, համագործակցություն և միջազգային կապեր, վերահսկողություն և գնահատում: ՌԾ-ն ներառում է նաև գնահատման սանդղակ, սակայն չեն սահմանվել հստակ չափանիշներ: Յուրաքանչյուր ոլորտի համար սահմանվել են նպատակները, խնդիրները, վերջնարդյունքները, ինչպես նաև ռիսկերը և դրանց նվազեցման ուղիները: Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր ոլորտի նպատակներից բխում են հավելյալ նպատակներ, խնդիրներ և դրանց լուծման ուղիներ: Նպատակների «առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները» սահմանվել են թե՛ քանակական, թե՛ որակական ոչ չափելի բնութագրիչներով, օրինակ՝ «ազգային բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակված ուսանողներ»: ՌԾ-ի ռազմավարական ուղղությունները որոշ դեպքերում հատվում են, օրինակ՝ ուսանողական համակազմը՝ կարիերայի կառավարման, շենքային պայմանները՝ նյութատեխնիկական բազայի և ֆինանսատնտեսական գործունեության հետ: Որակի ապահովումը ներկայացված չէ որպես առանձին ուղղություն, սակայն առկա է կրթական գործունեության, կառավարման համակարգի և այլ ոլորտների խնդիրներում, օրինակ՝ «նպաստել կրթության որակի ներքոլեջային համակարգի զարգացմանը»:

ՌԾ-ի 2022-2027թթ. պլան-ժամանակացույցում արտահայտված են խնդիրները ըստ ոլորտների, գործողությունը, ակնկալվող արդյունքը, արդյունքի վերահսկողությունը և գնահատումը (պատասխանատու ստորաբաժանումները), ժամկետը, ֆինանսական միջոցները և ռիսկերը: Այդուհանդերձ, պլան-ժամանակացույցը չի արտահայտում ակնկալվող արդյունքների քանակական ցուցիչները, գործողությունները ըստ իրենց արդյունքների տարանջատված չեն, իսկ կատարման ժամկետները ընդհանրական են՝ հիմնականում սահմանվում են մինչև 2027 թվականը կամ որպես շարունակական:

Առկա են նպատակներ և խնդիրներ, որոնց ուղղությամբ իրականացվել են քայլեր, սակայն քոլեջի կողմից սահմանված անհրաժեշտ ցուցանիշները, օրինակ՝ ընդունելության ցուցանիշների աճը, դեռևս տեսանելի չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որոշ մասնագիտությունների համար առկա են ռեսուրսներ, սակայն ուսանողների սահմանված բավարար քանակը չհավաքագրելու պատճառով մասնագիտությունները չեն գործում, օրինակ՝ արդեն մի քանի տարի շարունակ չի հավաքագրվում բավարար քանակով ատամնատեխնիկական գործ մասնագիտությամբ դիմորդներ, նաև պարզ դարձավ, որ վերոնշյալը որոշակիորեն անդրադառնում է աշխատաշուկայի վրա, քանի որ առկա է տվյալ ուղղությամբ մասնագետների պահանջարկ:

Ըստ «ԿՊԲՔ ՊՈԱԿ-ում իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման և շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման» քաղաքականության (2021թ.)՝ քոլեջի ներքին շահակիցներն են ուսանողները, դասախոսները, արտաքին շահակիցներն են գործատուները և շրջանավարտները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՌԾ-ն մշակելիս հաշվի են առնվել նախորդ ՌԾ-ի իրականացման շրջանում հարցումների, հանդիպումների ընթացքում վեր հանված խնդիրները, որոնք հիմք են հանդիսացել նոր ՌԾ-ի նպատակների և խնդիրների սահմանման համար: Քոլեջի և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցները ընդհանուր առմամբ կիսում են քոլեջի որդեգրած առաքելությունը և սահմանված նպատակները:

Քոլեջը որպես ՌԾ գնահատման մեխանիզմներ դիտարկում է հաշվետվությունները նաև ՌԾ-ում սահմանված են «առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ» հնգամյա կտրվածքով, սակայն հարկ է նշել, որ սահմանված ցուցիչները փոխկապակցված չեն ՌԾ նպատակների հետ: Սահմանված ցուցանիշները մեծամասամբ չունեն հստակ քանակական և չափելի բնութագրիչներ, օրինակ՝ «վերապատրաստված աշխատակիցների տոկոսը՝ տարեկան», «պարգև ստացած դասախոսների թիվ» և այլն: Որոշ դեպքերում ցուցանիշները արտահայտում են որակական բարելավումներ, որոնք նույնպես ունեն չափելիության խնդիր, օրինակ՝ «ազգային, բարոյական համամարդկային արժեքների ոգով դաստիարակված մտավոր և հոգևոր զարգացած ուսանողներ», «քոլեջի ուսանողների բավարարվածության ամենամյա պարտադիր գնահատմա արդյունքներ» և այլն:

Քոլեջն ունի հաստատված ներքին գնահատման ընթացակարգ (2021թ.): Ներքին գնահատումը վերաբերվում է քոլեջի ընդհանուր գործունեության արդյունքներն, քանակական տվյալների մշակմանը և հավաքագրմանը, որը իրականացվում է ներքին գնահատման որակի հանձնախմբի կողմից, յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ըստ հաստատված ձևաչափի և չափանիշների կազմվում է ներքին գնահատման տեղեկանք: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներքին գնահատման տեղեկանքը թեև ներկայացնում է քոլեջի գործունեության տարբեր կողմերի վերաբերյալ որոշ վերլուծական տվյալներ սահմանված չափանիշները, որոշակիորեն ծածկում են ՌԾ ուղղությունները, սակայն տվյալները փոխկապակցված չեն ՌԾ-ի առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշների հետ: Ընդհանուր առմամբ քոլեջի հաշվետվությունները փոխկապակցված չեն ՌԾ նպատակների հետ, մասնավորապես ներկայացվում են պլանավորված աշխատանքների կատարողականը, սակայն տեսանելի չէ թե, ՌԾ որ նպատակի կամ խնդրի լուծման հետ են փոխկապակցվում ստորաբաժանումների աշխատանքային պլաններով նախատեսված գործողությունները: Քոլեջը 2023թ. մշակել է նաև «Հաշվետվությունների գնահատման ընթացակարգ», որտեղ որոշակիորեն սահմանվում են հաշվետվությունների գնահատման չափանիշները և 4 միավորային սանդղակը, այդուհանդերձ փաստաթուղթը դեռևս չի կիրառվել պրակտիկայում:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի գործունեությունը համապատասխանում է ՌԾ նպատակներին և խնդիրներին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը ընդգծում է Կապան քաղաքում քոլեջի եզակի դերակատարությունը միջին մասնագիտական բժշկական կադրերի պատրաստության գործում: Վերոնշյալը շեշտադրում է քոլեջի որդեգրած առաքելությունը, որը ընդունելի է ներքին և արտաքին շահակիցների կողմից:

Փորձագիտական խումբը դրական է համարում ՌԾ-ի մշակման աշխատանքներում շահակիցների կարծիքների ընդգրկումը, այդուհանդերձ կարևոր է որ կիրառվեն ներքին և արտաքին շահակիցների անմիջական ներգրավվման մեխանիզմներ, որը թույլ կտա քոլեջին զարգացնել և կատարելագործել իր ՌԾ-ն՝ հաշվի առնելով շահակիցների տարբեր խմբերի կարիքներն ու ակնկալիքները: Ինչ վերաբերում է ՌԾ-ին, ապա քոլեջը որոշակիորեն բարելավել է ռազմավարական պլանավորման գործիքակազմը, իր նախորդ ՌԾ շրջափուլի հետ համեմատած: Այսուհանդերձ փորձագիտական խումբն ունի որոշ դիտարկումներ. ռազմավարական ուղղություններից բխող նպատակները ոչ միշտ են հստակ ձևակերպված, վերջիններս միմյանց հետ համադրման և հիերարխիկ դասակարգման կարիք ունեն, որը թույլ կտա արտաքին գնահատողին տրամաբանական շղթայի մեջ տեսնել յուրաքանչյուր ռազմավարական ուղղության ներքո միավորված նպատակների խումբը՝ դրանցից բխող խնդիրները և գործողությունները: Նպատակները սահմանելիս երբեմն նկատելի են լայն վերացարկված ձևակերպումներ, որը կարող է բնորոշել ոլորտային ուղղվածությունը: Քոլեջի օբյեկտիվ իրականությունը արտահայտող և չափելի նպատակների սահմանումը թույլ կտա հասնել տեսանելի բարելավումների հիմնված օբյեկտիվ տվյալների վրա:

ՌԾ-ի պլան-ժամանակացույցի կառուցվածքի մեջ հստակ սահմանված խնդիրների, վերջնարդյունքների, պատասխանատուների և ժամկետների բացակայությունը նվազեցնում է դրա կիրառելիությունը որպես իրականացվող գործողությունների և հաշվետվողականության գնահատման գործիք: Նշված տարրերի հստակեցումը և գործողությունների տարանջատումը կդյուրացնեն ՄՈՒՀ-ի կողմից ՌԾ-ի արդյունավետ իրականացումը և գնահատման գործիքակազմի հաջող կիրառումը:

Դրական է, որ ՌԾ-ում առկա են «առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ», սակայն դրանք սահմանվել են հնգամյա կտրվածքով, մյուս կողմից ոչ բոլոր ցուցիչները ունեն չափելի բնութագրիչներ, ինչը թույլ չի տալիս ընթացս վերահսկել ՌԾ իրականացումը: Կարևոր է նաև, որ ՌԾ-ում սահմանվող առաջընթացի գնահատման ցուցիչները փոխկապակցվեն պլան ժամանակացույցում տրված գործողություններից «ակնկալվող արդյունքների» հետ:

Վերոնշյալ նկատառումների հաշվառումը թույլ կտա քոլեջին սահմանել չափելի նպատակներ, և հստակ ճանապարհային քարտեզ՝ սահմանելով նպատակների և խնդիրների իրականացման համար անհրաժեշտ քայլեր: Հաշվի առնելով, որ քոլեջում ՌԾ-ի գնահատման հիմնական մեխանիզմը հաշվետվություններն են և ներքին գնահատման տեղեկանքը, ապա այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է նաև ստորաբաժանումների և քոլեջի տարեկան հաշվետվությունների փոխկապակցումը ՌԾ առաջընթացի գնահատման ցուցիչների և ՌԾ պլան-ժամանակացույցի հետ, դարձնելով դրանք առավել տեղեկատվական և վերլուծական:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Կապանի պետական բժշկական քոլեջի ՌԾ-ում սահմանված առաքելությունը համահունչ է իր գործունեությանը, ռազմավարական նպատակները և խնդիրները սահմանելիս հաշվի են առնվել ներքին և արտաքին շահակիցների կարիքները, մշակվել են արդյունքների գնահատման և բարելավման մեխանիզմներ և ընթացակարգեր՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը համապատասխանում է Չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

ԿՊԲՔ-ի ընթացիկ կառավարումն իրականացվում է տնօրենի, Կառավարման, Մանկավարժական և տնօրենական խորհուրդների կողմից: Ըստ 2024-2025 ուստարվա տվյալների քոլեջում գործընթացների համակարգման նպատակով գործում են թվով խորհուրդներ, հանձնաժողովներ և ենթակառույցներ, այդ թվում՝ տնօրենական, դաստիարակչական, ուսումնամեթոդական, մանկավարժական, գրադարանային և ուսանողական խորհուրդները, ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ նշանակող, տարիֆիկացիոն, գույքագրման, խոտանման և փաստաթղթերի արխիվացման ոչնչացման, մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման հանձնաժողովները, ներքին որակի ապահովման, հետազոտական աշխատանքները համակարգող, արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառույցները: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերոնշյալ խորհուրդներում, հանձնաժողովներում և ենթակառույցներում հիմնականում ներգրավված են նույն անձինք՝ տնօրենը, ուսումնական գծով փոխտնօրենը, մեթոդիստը, ամբիոնների վարիչները, որակի ապահովման պատասխանատուն, կարիերայի ուղղորդման պատասխանատուն, ուսանողական խորհրդի նախագահը և այլն: Այնուամենայնիվ, կառավարման վերոնշյալ բազմաշերտ համակարգի կիրառումը առաջացնում է աշխատանքային պարտականությունների գերբեռնվածություն վերոնշյալ անձանց մոտ և տեսանելի չէ աշխատանքների արդյունավետությունը:

ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքում ներկայացված են ստորաբաժանումների միջև առկա (հորիզոնական և ուղղահայաց) կապերը: Քոլեջում գործող խորհուրդների, ստորաբաժանումների գործունեությունը և լիազորությունների շրջանակը սահմանվում է կանոնակարգերի և պաշտոնների անձնագրերի միջոցով: Ինքնավերլուծության զեկույցում Քոլեջի ներքին փոխկապվածության և հաշվետվողականության գրաֆիկական կառուցվածքում նաև առանձնացված են գործառնական կապերը: Հարկ է նշել, որ տվյալ կառուցվածքում նկատվում է գնահատողների և կատարողների անձերի կրկնություն: Օրինակ, մեթոդիստ – որակի պատասխանատու – ամբիոնի վարիչների միջև ուղղահայաց հաշվետվողական կապում մեթոդիստը միաժամանակ հանդիսանում է որակի ենթակառուցվածքի պատասխանատու, ամբիոնի վարիչ, կուրսղեկ և դասախոս: Բացի այդ, քոլեջի այլ հաստիքային աշխատողներ ևս կատարում են մեկից ավելի գործառույթներ. մասնավորապես, կարիերայի ուղղորդման պատասխանատուն նաև զբաղեցնում է ամբիոնի վարիչի, կուրսղեկի և դասախոսի պաշտոնները:

Դասախոսական, ուսանողական համակազմերը ընդգրկված են կառավարման, մանկավարժական և տնօրենական խորհուրդներում, գործող բոլոր հանձնաժողովներում և ենթակառույցներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս խորհուրդներում ներգրավված ուսանողները հիմնականում նախաձեռնողականություն չեն ցուցաբերում կարիքների վերհանման համար: Տեսանելի չեն նաև նիստերի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տարածման և մյուս շահակիցներին դրանց մասին իրազեկման քայլերը:

Քոլեջը 2021թ. հաստատել է «ԿՊԲՔ ՊՈԱԿ-ի ֆինանսների պլանավորման և կառավարման» քաղաքականությունը, որի միջոցով քոլեջը նախատեսում է բարելավել ֆինանսական հոսքերի բաշխման արդյունավետությունը: Քաղաքականությունը սահմանում է, նպատակները, խնդիրները, միջոցների բաշխման մեխանիզմները, մասնավորապես օգտագործել նախորդ տարվա փաստացի ծախսերը որպես նախադեպ՝ ընթացիկ տարվա բյուջեի բաշխվածության գնահատման համար (կետ4.5): Ֆինանսական հոսքերի երկարաժամկետ պլանավորման և ՌԾ-ի հետ փոխկապակցման մեխանիզմներ սահմանված չեն վերոնշյալ քաղաքականությամբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ֆինանսական համապատասխան պլանավորում դեռևս չի իրականացվել՝ գնահատելու համար, թե որքան ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ ՌԾ նպատակների իրականացման համար և դրանց ներդրումն ինչ արդյունավետության կարող է հանգեցնել:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջի ՌԾ պլան-ժամանակացույցում թեև առանձնացվում են ռազմավարական նպատակներին հասնելու համար պլանավորված գործողությունների իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցները, սակայն դրանք հստակեցված չեն՝ նշվում է. «ներքին ռեսուրսներ»: Ֆինանսների բաշխումը քոլեջը իրականացնում է տարեկան պլանավորմամբ՝ ֆինանսատնտեսական նախահաշվի նախագծի հիման վրա (2023թ.), ծախսերի հիմնական ուղղություններն են՝ աշխատակիցների աշխատավարձերը (87,8 %), գույքի՝ ներառյալ գրասենյակային գույք և սարքավորումներ, տնտեսական պարագաներ (1,56 %), ինչպես նաև ուսումնական նյութերի (0,48%) ձեռքբերումը՝ հիմք ընդունելով ստորաբաժանումների ներկայացրած զեկուցագրերը և այլն:

Քոլեջի գործունեությունն իրականացվում է ռազմավարական՝ երկարաժամկետ և ընթացիկ տարեկան՝ կարճաժամկետ պլանավորումներով: Ստորաբաժանումների աշխատանքային պլանները կազմվում են տարեկան՝ կարճաժամկետ պլանավորմամբ: Պլանավորման փաստաթղթերի դիտարկումը ցույց տվեց, որ ստորաբաժանումների պլանավորման գործընթացները տարեց տարի կրկնվում են: Պլանավորման մեջ չի ընդգծվում ՌԾ հիմնախնդիրը: Քոլեջը վերջին 2024-2025 ուսումնական տարում ներդրել է աշխատանքային պլանների կատարման նոր ձևաչափ, որտեղ նշվում է աշխատանքի բովանդակությունը, իրականացվող գործողությունը, ակնկալվող արդյունքը, կատարողը, ժամկետը, առանձին դեպքերում նշվում է վերահսկողը, սակայն ձևաչափը լիովին չի տարածվել և ոչ բոլոր ստորաբաժանումներն են կիրառում այն: Հարկ է նշել, որ աշխատանքային պլաններում տեսանելի չէ ՌԾ-ի հետ փոխկապվածությունը: Ընդհանուր առմամբ աշխատանքային պլաններում տրվող վերջնարդյունքները (ակնկալվող արդյունքները) չափելի չեն, օրինակ՝ գրադարանավարի 2024-2025 աշխատանքային պլանում տրված՝ «Ձևավորել և ընտրել գրադարանային ակտիվի նոր կազմ» գործողության ակնկալվող արդյունքն է «ուսանողների ակտիվացում և ներգրավում տարբեր միջոցառումներին»:

ՄՈՒՀ-ը ստորաբաժանումների աշխատանքների վերահսկողության և մշտադիտարկման մեխանիզմ դիտարկում է հաշվետվությունները: Հաշվետվությունների կատարումը, հաշվետվողականությունը և ներկայացման ժամանակացույցը կանոնակարգվում է ըստ «ԿՊԲՔ ՊՈԱԿ-ում իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման և շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման» քաղաքականության (2021թ.): Հաշվետվությունների դիտարկումը ցույց է տալիս, որ օրինակ տնօրենի տարեկան հաշվետվության մեջ, որը անվանվում է «ներքին գնահատման տեղեկանք» արտահայտված են քոլեջի հիմնական գործունեության տվյալների ամփոփ վերլուծությունը՝ հիմնականում քանակական արտահայտմամբ, սակայն այս մոտեցումը ինստիտուցիոնալ չէ: 2023-2024 ուստարում ներդրվել է հաշվետվությունների

կատարման նոր ձևաչափ, որտեղ աղյուսակի միջոցով ամփոփվում են աշխատանքային պլանով նախատեսված գործողությունները (կատարված աշխատանքի բովանդակությունը, կատարողը, ակնկալվող արդյունքները և գնահատման չափանիշները կամ վերջնարդյունքը, վերջնաժամկետը, նշումները)։ Քոլեջը 2023թ. մշակել է «Հաշվետվությունների գնահատման ընթացակարգ», որի նպատակն է բարձրացնել հաշվետվությունների որակը և գնահատել ըստ մշակված սանդղակի 4-ից 1 միավորներով (որտեղ 4-ը լիարժեք բավարարում է սահմանված չափանիշներին)։ Սակայն, նշված ընթացակարգով գնահատումներ չեն իրականացվել։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նոր ձևաչափով կատարված հաշվետվությունները հիմնականում նկարագրական են և ներկայացնում են տվյալ գործողությունը կատարվել է թե ոչ (օրինակ՝ կարիերայի ուղղորդման պատասխանատուի, որակի ապահովման ենթակառույցի հաշվետվությունները)։ Հաշվետվություններում արտահայտված վերջնարդյունքները կամ ակնկալվող արդյունքները փոխկապակցված չեն ՌԾ-ի հետ։

Քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության փորձառություն ունի, մասնավորապես համավարակի ընթացքում իրականացրել է հարցում դպրոցականների շրջանակներում պարզելու համար, որքանով են տեղեկացված քոլեջի մասին, որի արդյունքները ցույց են տվել, որ տեղեկացվածությունը բավականին ցածր է եղել, ինչի հիման վրա ակտիվացրել են դիմորդների ներգրավվման և մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքները։ Քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների որոշակի ուսումնասիրություն իրականացվում է կարիերայի ուղղորդման պատասխանատուի կողմից՝ աշխատաշուկայի վերլուծության, արտաքին շահակիցների հետ համագործակցության և հետադարձ կապի ապահովման միջոցով։ Այս համատեքստում գործատուների շրջանում իրականացվել են հարցումներ՝ պարզելու համար, թե ինչ մասնագետների կարիք ունեն։

ՌԾ-ում ներկայացված SWOT վերլուծության միջոցով կատարվել է նախորդ ռազմավարական ծրագրի կատարողականի վերլուծություն։ Արդյունքում վեր են հանվել քոլեջի հիմնախնդիրները, սահմանվել են ռազմավարական ուղղությունները, նպատակները, որոնք արտացոլվել են նոր 2022-2027թթ. ռազմավարական զարգացման ծրագրում։ Այնուամենայնիվ, քոլեջը դեռևս չի կատարել այլ արտաքին գործոնների խորքային ուսումնասիրություններ։

Քոլեջը ՈԱ ենթակառույցի հարցումների միջոցով իրականացնում է ներքին խնդիրների վերհանում, օրինակ՝ ուսանողների շրջանում դասավանդման որակի վերաբերյալ, ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ և այլն։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հնարավորության դեպքում քոլեջն արձագանքում է հարցումների արդյունքում վեր հանված խնդիրների լուծմանը։ Օրինակ, դասալսումների միջոցով փորձում է բացահայտել դասավանդման որակին առնչվող հարցեր և հնարավոր մեթոդական աջակցություն տրամադրել դասախոսին՝ խնդիրը լուծելու նպատակով։ Ռեսուրսների համալրման տեսակետից քոլեջը հիմնականում բավարարում է ուսումնական անհրաժեշտ պարագաները, լսարանների կահավորանքի բարելավման խնդիրները։ Հարկ է նշել նաև, որ ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրության և ռիսկերի վերհանման համար այլ մշակված գործիքակազմ քոլեջը դեռևս չունի։

Քոլեջը փորձ է կատարել, որոշ գործընթացներում ներդնել ՊԻԳԲ սկզբունքը, օրինակ ընդունելության գործընթացի բարելավման հետ կապված, սակայն շրջափուլը ոչ միշտ է լիարժեք գործարկվում։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում առկա հիմնական գործընթացները գտնվում են պլանավորման և իրականացման փուլերում։

ՄՈՒՀ-ում տվյալների հավաքագրման հիմնական մեխանիզմը հարցումներն են, որոնք ներկայումս իրականացվում են էլեկտրոնային տարբերակով։ Կրթական ծրագրերի իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվում է ինչպես ընթացս ուսանողների

առաջադիմության վերաբերալ վերլուծված տվյալների միջոցով, այնպես էլ պետական ամփոփիչ ատեստավորման նախագահների կողմից տրվող կարծիքների միջոցով: Շրջանավարտների հետագիծը քոլեջը դեռևս լիովին չի ուսումնասիրում, հավաքագրվել են տվյալներ գործատուներից իրենց մոտ աշխատող շրջանավարտների վերաբերյալ:

Քոլեջը չունի տեղեկատվության հավաքագրման և վերլուծության մեխանիզմների արդյունավետությունը գնահատող անհրաժեշտ գործիքակազմ:

Քոլեջն ունի ֆեյսբուքյան էջ, որտեղ լուսաբանվում են քոլեջի առօրյա գործընթացները, սակայն մասնավորապես քոլեջի ՄԿԾ-ների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում չի իրականացվում, լիովին ապահովված չէ կառավարման որոշումների թափանցիկությունը արտաքին շահակիցների համար, քոլեջի կայք էջը դեռևս գործարկված չէ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջում կոլեգիալ և միանձնյա կառավարման օղակների առկայությունը, սակայն վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի միջև մի շարք պարտականությունների համատեղումը հանգեցնում է որոշ ղեկավարների, այդ թվում՝ ուսումնական գծով փոխտնօրենի գերբեռնվածությանը: Այս իրավիճակը ոչ միայն խաթարում է կառավարման օպտիմալությունը, այլև բացասաբար է անդրադառնում հաշվետվողականության օբյեկտիվության վրա՝ կատարող և գնահատող անձանց գործառույթների համատեղման պատճառով: Հաշվի առնելով այս խնդիրները՝ անհրաժեշտ է վերանայել կառավարման օղակների բաշխումը, ապահովելով կառավարման գործընթացների արդյունավետություն, պատասխանատվության հստակ սահմանազատում և հաշվետվողականության թափանցիկ մեխանիզմներ:

Քոլեջի ֆինանսական պլանավորման ռազմավարությունը, թեև ապահովում է կարճաժամկետ տարեկան պլանավորում, սակայն չի ներառում երկարաժամկետ ֆինանսական կանխատեսումներ: Արդյունքում, ռազմավարական առաջնահերթությունները չեն կապակցվում ռեսուրսների բաշխման հետ, ինչը դժվարացնում է կայուն զարգացումը: Որպես լուծում՝ անհրաժեշտ է մշակել երկարաժամկետ ֆինանսական ռազմավարություն, որը կապահովի միջոցների առավել նպատակային բաշխումը, հնարավորություն կտա ներգրավել լրացուցիչ ռեսուրսներ և ամրապնդել քոլեջի ֆինանսական կայունությունը:

Կառավարման կոլեգիալ օղակներում դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը դրական քայլ է, սակայն նրանց մասնակցության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է ներդնել գործուն մեխանիզմներ, որոնք խթանեն նախաձեռնողականությունը:

Քոլեջը ձեռնարկել է աշխատանքային պլանների կատարելագործման գործընթաց, կենտրոնանալով վերջնարդյունքահենք պլանավորման վրա, սակայն այս մոտեցումը դեռևս բովանդակային փոփոխությունների չի հանգեցրել: ՌԾ-ի նպատակներից բխող ցուցանիշների, պլան-ժամանակացույցի և ստորաբաժանումների պլանավորման փաստաթղթերի միջև առկա անհամապատասխանությունները խոչընդոտում են ՌԾ-ի լիարժեք իրագործմանը: Արդյունավետ կառավարման և հաշվետվողականության համար կարևոր է ապահովել պլանավորման բոլոր մակարդակների փոխկապակցվածությունը՝ ռազմավարական ծրագրի խնդիրները հստակ արտացոլելով ստորաբաժանումների աշխատանքային պլաններում:

Քոլեջը պարբերաբար ուսումնասիրում է իր գործունեության վրա ազդող գործոնները, սակայն արտաքին միջավայրի ռիսկերը՝ մասնավորապես աշխատաշուկայի փոփոխություններն ու ընդունելության ցուցանիշների անկումը, դեռևս բավարար չեն վերլուծվում: Այս գործոնների անտեսումը կարող է բացասաբար անդրադառնալ ոչ միայն կրթական ծրագրերի արդյունավետության, այլև ֆինանսական կայունության վրա: Ուստի անհրաժեշտ է խորացնել ներքին և արտաքին գործոնների բազմակողմանի վերլուծությունը՝ ներգրավելով շահակիցներին և կանխատեսելով հնարավոր ռիսկերը:

Քոլեջն իրականացնում է որակի կառավարման բարեփոխումներ, սակայն ՊԻԳԲ շրջափուլը դեռևս ինստիտուցիոնալացված չէ: Չնայած որակ ապահովման ենթակառուցվածքի առկայությանը՝ ուսումնական գծով փոխտնօրենին հաշվետու լինելը նվազեցնում է անկախության մակարդակը և խոչընդոտում օբյեկտիվ գնահատման իրականացմանը: Բացի այդ, հարցումները մեծամասամբ իրականացվել են ոչ պարբերաբար, իսկ դրանց արդյունքների հիման վրա կատարված բարելավումները տեսանելի չեն, մյուս կողմից տարբեր տարիների հարցումների համեմատական վերլուծությունների բացակայությունը թույլ չի տալիս գնահատել առաջընթացը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԿՊԲՔ-ի կառավարման համակարգը չի նպաստում տվյալահենք որոշումների կայացմանը, ռազմավարական նպատակների իրականացման համար առկա է մարդկային և ֆինանսական և նյութական ռեսուրսների համալրման կարիք, կոլեգիալ և միանձնյա կառավարման օղակներում ընդգրկված են նույն պատասխանատուները, կարճաժամկետ պլանները փոխկապակցված չեն երկարաժամկետ պլանավորման փաստաթղթերի հետ, ՊԻԳԲ շրջափուլը ինստիտուցիոնալ մակարդակում չի իրականացվում, տեղեկատվության հավաքագրման վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմները բացակայում են, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

«Կապանի պետական բժշկական քոլեջ»-ն իրականացնում է միջին մասնագիտական 8 կրթական ծրագիր՝ «Քույրական գործ», «Դեղագործություն», «Մանկաբարձական գործ», «Բուժական կոսմետոլոգիա», «Ատամնատեխնիկական գործ», «Սոցիալական աշխատանք», «Բուժական մերսում» և «Լաբորատոր ախտորոշում»: 2020 թվականին ներդրվել է «Սոցիալական աշխատանք» կրթական ծրագիրը, որի ներդրման համար հիմք է հանդիսացել աշխատաշուկայի ուսումնասիրությունները և արտաքին շահակիցներից ստացված արձագանքները:

«Ատամնատեխնիկական գործ», «Բուժական կոսմետոլոգիա», «Մանկաբարձական գործ», «Բուժական մերսում», «Լաբորատոր ախտորոշում» և «Դեղագործություն» (առկա) մասնագիտություններով քոլեջը չի կարողանում հավաքագրել օրենքով սահմանված նվազագույն թվով դիմորդներ:

ՄՈՒՀ-ի դասախոսական կազմը մասնակցել է պետական կրթական չափորոշիչների կազմմանը և վերանայմանը: Քոլեջը 2021 թվականին հաստատել է «Մասնագիտական կրթական ծրագրերի մշակման» կարգը, «Ուսումնական պլանների և առարկաների (մոդուլների) ծրագրերի մշակման, վերանայման և հաստատման» կանոնակարգը, ինչպես նաև «ՄԿԾ մասնագրերի լրացման» կարգը, որոնց հիման վրա իրականացվել են ծրագրերի բարելավումներ:

Յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար քոլեջը մշակել է ուսումնական պլանի քարտեզ, որտեղ վերջնարդյունքները դասակարգված են երեք խմբերում՝ Ա. գիտելիքներ, Բ. գործնական մասնագիտական կարողություններ, Գ. հմտություններ, քարտեզագրված ուսումնական պլանի մոդուլների հետ: Այնուամենայնիվ, փաստաթղթերի դիտարկումը ցույց է տալիս, որ սահմանված

վերջնարդյունքները չեն արտահայտում մասնագիտության աշխատանքային գործունեության առանձնահատկությունները, իսկ քարտեզագրումը նույնությամբ կրկնվում է բոլոր կրթական ծրագրերի համար: Վերջնարդյունքները սահմանելիս քոլեջը տեղայնացրել է ՊԿՉ-ի միջին մասնագիտական որակավորմամբ շրջանավարտին ներկայացվող պահանջները և ծրագրի իրականացման նվազագույն պահանջները, սակայն դրանք ըստ էության չեն բովանդակում հստակ ձևակերպված վերջնարդյունքներ:

Քոլեջն իրականացրել է մոդուլային ծրագրերում թեմաների վերանայում, ինչպես նաև ներդրվել են ընտրովի առարկաներ, մասնավորապես՝ «Սոցիալական աշխատանք» ՄԿԾ-ում ներդրվել է «Սոցիալական հետազոտության անցկացման մեթոդները» ընտրովի դասընթացի մոդուլը, «Լանդշաֆտագիտություն և էկոլոգիայի հիմունքներ» առարկայի ծրագրերում «Թափոնների կառավարման բոլոր բաղադրիչներ» թեմաների ներդնումը, նաև «Ճանապարհային երթևեկություն և անվտանգության ապահովում» առարկան: Հարկ է նշել, որ փոփոխությունների համար հիմք են հանդիսացել նաև պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի առաջարկները օրինակ՝ «Քույրական գործ» մասնագիտության «Քույրական գործի հիմունքներ» մոդուլում, «Ախտահանիչ միջոցներ» թեման վերանայվել է և համապատասխանեցվել արդի բժշկության մեջ կիրառվող նորագույն միջոցներին, ներդրվել է նաև «Ընտանեկան բուժքույրություն» ընտրովի մոդուլը: «Դեղագործություն» մասնագիտության մեջ ներդրվել է «Ընդհանուր ֆիզիոլոգիա պաթոլոգիայի հիմունքներով» ընտրովի մոդուլը: «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտության մեջ նորացվել են մատնահարդարման մեջ կիրառվող մեթոդները և նյութերը: Վերոնշյալ փոփոխությունները իրականացվել են ընտրովի և պահուստային ժամերի հաշվին:

Պրակտիկաների կազմակերպումը կանոնակարգվում է «ԿՊԲՔ ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման և անցկացման» կարգի համաձայն: Ուսումնական պլաններում առկա են պրակտիկայի հետևյալ տեսակները՝ ուսումնական և արտադրական: «Քույրական գործ» կրթական ծրագրի շրջանակներում 1-ին և 2-րդ կիսամյակներում ուսանողները գնում են պրակտիկա 7 անգամ, «Բուժական կոսմետոլոգիա» և «Դեղագործություն» կրթական ծրագրի շրջանակներում՝ 4 անգամ: Ըստ կրթական ծրագրերի պրակտիկաները կազմակերպվում են համապատասխան բազաներում:

ՄՈՒՀ-ում դասախոսների կողմից դասավանդման մեթոդների ընտրության հարցում առկա են որոշակի միասնական մոտեցումներ, որոնք ձևավորվել են մեթոդիստի աշխատանքի արդյունքում: Թեև այդ մոտեցումները փաստաթղթավորված չեն, դրանց կիրառումն ապահովվում և վերահսկվում է մեթոդիստի կողմից: Դասավանդման գործընթացում կիրառվում են իրավիճակային խնդիրներ, բացատրական և ցուցադրական մեթոդները: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասավանդման գործընթացում դասախոսները կարևորում են ուսանողների ստեղծագործական և հետազոտական կարողությունների զարգացումը, օրինակ՝ «Սոցիալական աշխատանք» մասնագիտության շրջանակներում ուսանողները իրականցնում են սոցիոլոգիական հարցումներ հասարակության շրջանում, «Դեղագործություն» և «Քույրական գործ» մասնագիտության շրջանակներում առաջարկվում են իրավիճակային խնդիրներ և դերային խաղեր դեղագործ-պացիենտ և բուժքույր-պացիենտ փոխհարաբերությունների շուրջ (ախտորոշում, դեղորայքի ճիշտ ընտրություն խորհրդատվություն և այլն): «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտությունում իրավիճակային խնդիրները առնչվում են տարբեր մարդկանց մոտ ի հայտ եկող կոսմետոլոգիական բնույթի խնդիրների և դրանց լուծման ուղղությամբ ճիշտ խնամքի միջոցների ընտրության շուրջ: Դասալսումների արդյունքում պարզ դարձավ, որ ավանդական դասախոսությանը զուգահեռ դասավանդողները կիրառում են ակտիվ ուսուցման մեթոդներ (մասնավորապես՝ Վեննի դիագրամի կիրառում, խմբային աշխատանք և հասկացությունների քարտեզագրում և այլն), քոլեջը գործող մասնագիտությունների համար ունի

անհրաժեշտ դիդակտիկ պարագաներ և ուսումնական գույք, որը կիրառվում է գործնական պարապմունքների անցկացման համար։

ԿՊԲՔ-ում ուսանողների գնահատման գործընթացը կազմակերպվում է համաձայն «Ուսանողների ընթացիկ ամփոփիչ ստուգման և գնահատման» կարգի, որը վերանայվել է 2021 և 2023 թվականներին, «ԿՊԲՔ կիսամյակային և փոխադրական քննությունների անցկացման և կուրսից կուրս փոխադրման» (2019թ.) կարգերի: Գնահատման մեթոդները սահմանվում են մեթոդական ուղեցույցներում: 2024թ.-ին Քոլեջը ըստ կրթական ծրագրերի իրականացրել է մոդուլային ծրագրերի ուսումնառության արդյունքների քարտեզագրում դասավանդման, ուսումնառության (ներառյալ օգտագործվող ռեսուրսները) և գնահատման մեթոդների հետ, ներկայացնելով յուրաքանչյուր արդյունքի գնահատման համար տրվող հանձնարարականները (հարցաշարերը, թեստերը, խնդիրները): Վերոնշյալ քարտեզագրման մեջ հաճախ մոդուլի արդյունքի համար անհրաժեշտ ռեսուրսները ներկայացվում են ընդհանրական, օրինակ՝ «Բուժական կոսմետոլոգիայում մաշկի խնամքի իրականացում դասական մեթոդներով» մոդուլի արդյունքներում նշվում է «համապատասխան գործիքներ և նյութեր», կամ «անհրաժեշտ նյութերով»: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ վերջնարդյունքների գնահատման նպատակով դասախոսների կողմից տարբեր մեթոդներ են կիրառում, օրինակ՝ բանավոր հարցում, գրավոր առաջադրանքներ, խնդիրներ: Գնահատման թերթիկներում յուրաքանչյուր արդյունքի գնահատման համար նախատեսված են տեսական՝ բանավոր հարցեր և գործնական առաջադրանքներ, սակայն որոշ մոդուլներում գնահատման միջոցները չեն համընկնում մոդուլի վերջնարդյունքների հետ: Օրինակ, կարողությունների ստուգման նպատակով կիրառվում է միայն տեսական գիտելիքների ստուգման հարցաշար, սակայն բացակայում է գործնական բաղադրիչը: Մասնավորապես, «Դեղագործություն» կրթական ծրագրի շրջանակներում «Կազմակերպում և էկոնոմիկա» մոդուլի «Տարբերակել կեղծված դեղերը» վերջնարդյունքը գնահատվում է միայն տեսական հարցերով:

Յուրաքանչյուր կիսամյակի վերջում մասնագիտական մոդուլները ամփոփվում են, ամփոփիչ քննությամբ: Մոդուլների ամփոփիչ քննության հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում առկա են և՛ տեսական գիտելիքները, և՛ գործնական հմտությունները ստուգող հարցեր: Հարկ է նշել, որ ընթացիկ և ամփոփիչ գնահատման համար ՄՈՒՀ-ում մոդուլների ուսումնառության արդյունքների հստակ չափանիշներ (գնահատման ռուբրիկներ) դեռևս սահմանված չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները ապահովում են հետադարձ կապ ընթացիկ գնահատման ընթացքում: Արդյունքում ուսանողները հստակ պատկերացնում են, թե ինչպես է ձևավորվում նրանց գնահատականը և ինչ թերություններ ունեն:

Պրակտիկայի գնահատումը իրականացվում է պրակտիկայի վայրի ղեկավարի և քոլեջի պրակտիկայի ղեկավարի կողմից, հիմք համարելով օրագրերը և հաշվետվությունները, իրականացվում է հարցաշարով հարցում և գնահատում 10 բալային համակարգով: Պրակտիկայի օրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ օրագրերում նկարագրվում են յուրաքանչյուր օրվա կատարած աշխատանքները, որը հաստատվում է պրակտիկայի ղեկավարի ստորագրությամբ, ներկայացվում է ուսանողների գործնական աշխատանքները պրակտիկայի վայրերում, օրինակ՝ Քույրական գործ մասնագիտությամբ ուսանողները մասնակցում են պացիենտների հետազոտության գործընթացին հիվանդանոցի տարբեր բաժանմունքներում: Դեղատնային պրակտիկայի ընթացքում իրականացնում են դեղաբանական խմբերի ուսումնասիրում, դեղերի մուտքագրում, պիտակավորում, հաշվառում, վաճառք: Պրակտիկայի ավարտին ղեկավարը ուսանողի օրագրում ներկայացնում է տվյալ ուսանողի պրակտիկայի մասնակցությունը և բնութագիրը, ուսանողները ներկայացնում են հաշվետվություն իրենց անցկացրած պրակտիկայի վերաբերյալ: Պրակտիկայի գնահատականները չեն նշվում

պրակտիկայի օրագրերում՝ անցկացվում են գնահատման տեղեկագրում և ստուգման գրքույկներում, պրակտիկայի գնահատման համար հստակ չափանիշներ (գնահատման ռուբրիկներ) սահմանված չեն։

Քոլեջը ունի «Ուսանողների գիտելիքների գնահատման, բողոքարկման» կարգ (2019թ.), սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ընթացակարգին համաձայն գնահատականի բողոքարկման դեպքեր չեն գրանցվել, ուսանողները գնահատականի հետ անհամաձայնության դեպքում գնահատականը բարձրացնում են լրացուցիչ հարցադրումների պատասխանելու միջոցով։

Պետական ամփոփիչ ստուգման հարցաշարերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, Հարցաշարերում առկա են ինչպես տեսական, այնպես էլ գործնական հարցեր։ Պետական ամփոփիչ ատեստավորումն անցկացվում է երկու փուլով՝ ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների վերաբերյալ, որոնց ընթացքում գնահատվում է ուսանողի տեսական գիտելիքների և գործնական հմտությունների համադրումը։ Հարցատոմսերը բաղկացած են երկու մասից՝ տեսական գիտելիքների չորս հարց և երեք հարց գործնական հմտություններից, օրինակ՝ «Դեղագործական գործ» մոդուլի հարցաշարերում փոշի դեղաձևի փաթեթավորում և Լոռամրգու հերբարիումի ճանաչում, «Բուժական կոսմետոլոգիա» մոդուլում՝ կորյակների դեմ կիրառվող նրբաքսուքի պատրաստումը, իսկ «Քույրական գործը թերապիայում» մոդուլում՝ արյուն վերցնել բիոքիմիական անալիզի համար և ներմաշկային ալերգիկ փորձի կատարումը մուլյաժների վրա։ Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսական կազմը գնահատելիս կարևորում է տեսական և գործնական հմտությունները։ Գնահատումը իրականացվում է համաձայն 2023թ. վերանայված «ԿՊԲՔ-ի պետական ամփոփիչ ստուգման անցկացման և գնահատման» կարգի՝ 10 միավորային սանդղակով ըստ մշակված գնահատման բնութագրիչների առավելագույն և նվազագույն միավորին ներկայացվող պահանջների գիտելիքների, հմտության, կարողության և բարեվարքության համար, որտեղ հաշվի է առնվում օրինակ՝ ծրագրային նյութի իմացությունը, անծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողությունը, կողմնորոշման և կատարման բազմակողմանի վերլուծությունը, ստեղծագործական մոտեցումը։

Քոլեջը բենչմարքինգի իրականացման փորձառություն դեռևս չունի, այդուհանդերձ 2024 թվականին մշակել է «Բենչմարքինգի իրականացման քաղաքականության և ընթացակարգի» նախագիծը։

ՄԿԾ-ների մշտադիտարկման համար քոլեջը մշակել է մի շարք փաստաթղթեր՝ «ՄԿԾ ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգ» 2018թ., որը սակայն լիովին չի ներդրվել՝ գործընթացները կրել են հատվածային բնույթ։ Քոլեջը մշակել է նաև «ԿՊԲՔ ՊՈԱԿ-ի կրթական ծրագրերի գնահատման» քաղաքականությունը և «Կրթական ծրագրերի որակի գնահատման» ընթացակարգը (2022թ)., որը նախատեսում է ՄԿԾ-ների մշտադիտարկումը, սակայն չի նշվում իրականացման պարբերականությունը, իսկ գնահատման հիմնական մեխանիզմներ են համարվում հարցումները ներքին շահակիցների շրջանում, ինչպես նաև նշվում է, որ մշտադիտարկումը պետք իրականացվի և գնահատվի կրթության որակի ցուցիչներին համապատասխան։ Վերոնշյալ ցուցիչներին առնչվող «ԿՊԲՔ-ի կրթության որակի գնահատման ցուցիչների (ինդիկատորների) կոմպլեքս» (2019 թ.) փաստաթուղթը ներկայացնում է որոշակի ցուցիչների համալիր, որոնք հիմնականում չունեն հստակ քանակական և որակական բնութագրեր։ Այնուամենայնիվ, փաստաթղթում ներառված գնահատման ձևաթերթում սահմանված են տարբեր գործընթացների գնահատման 1-5 միավորային սանդղակներ, որտեղ միավորները ներկայացնում են համապատասխանության տոկոսային աստիճանը (1 միավոր՝ համապատասխանում է, 5 միավոր՝ չի համապատասխանում, որոնք չեն ապահովում օբյեկտիվ գնահատականներ։ Օրինակ, 1-5 միավորային սանդղակով գնահատման համակարգում ներառված են այնպիսի չափորոշիչներ,

ինչպիսիք են «ՄԿԾ-ն բովանդակային առումով համահունչ է այլ ճանաչված ՄԿԾ-ների հետ» կամ «ՄԿԾ-ի նկարագրությունը համապատասխանում է ՈԱՇ-ի պահանջներին»:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կիրառվող մշտադիտարկման հիմնական մեխանիզմներից են դասախոսների, ուսանողների և գործատուների շրջանում անցկացվող հարցումները, դասալսումները, ինչպես նաև պետական ամփոփիչ ատեստավորման ժամանակ գործատուների ներգրավումը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջի կողմից իրականացվող կրթական ծրագրերի կատարելագործումը, որը վկայում է առարկայական և մեթոդական բովանդակության թարմացման ուղղությամբ իրականացվող հետևողական աշխատանքի մասին, ինչը, ընդհանուր առմամբ, նպաստում է ուսումնական գործընթացի համապատասխանեցմանը աշխատաշուկայի կարիքներին: Այդուհանդերձ, որոշ մասնագիտությունների չիրագործման փաստը ենթադրում է, որ դիմորդների ներգրավման խոչընդոտները դեռևս բավարար չափով վերլուծված չեն, ինչը սահմանափակում է ծրագրերի իրականացման հնարավորությունները:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ներդրել է մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, վերանայման և հաստատման կարգեր, ինչպես նաև ձևավորել է ուսումնական պլանի քարտեզ, ինչը ապահովում է ծրագրերի կառուցվածքային կազմակերպվածությունն ու հետևողականությունը: Այնուամենայնիվ, բարելավման գործընթացները դեռևս պահանջում են հստակ վերջնարդյունքների սահմանում, որոնք լիարժեքորեն կարտացոլեն մասնագիտական ուղղվածությունը և կհամապատասխանեն աշխատաշուկայի պահանջներին: ՄԿԾ վերջնարդյունքների և մոդուլային ուսումնառության արդյունքների հստակ փոխկապակցումը թույլ կտա տեսանելի դարձնել ՄԿԾ-ների իրագործման ճանապարհային քարտեզը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ուսումնական գործընթացում արդեն իսկ կիրառվում են իրավիճակային խնդիրներ, որոնք նպաստում են ուսանողների վերլուծական մտածողության, խնդիրների լուծման և տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունների զարգացմանը: Փորձագիտական խումբը նաև կարևորում է դասավանդման և ուսումնառության մեթոդների շարունակաբար արդիականացումը քոլեջում, այդ թվում ՏՀՏ միջոցների կիրառությամբ, այդ նպատակով դասավանդման, ուսումնառության և գնահատման միասնական մոտեցումների փաստաթղթավորումը թույլ կտա ինստիտուցիոնալ մակարդակում բարելավել գործընթացները, ապահովելով համաչափ մոտեցում բոլոր ՄԿԾ-ների համար:

Ուսանողների գնահատման գործընթացում ռուբրիկների բացակայությունը, ինչպես նաև հավաքագրված տվյալների որակական և քանակական չափումների սահմանափակումները կարող են դժվարեցնել ավարտական և ընթացիկ արդյունքների օբյեկտիվ արձանագրումը:

Պրակտիկայի և պետական ամփոփիչ ատեստավորման ձևաչափերում գնահատման հիմնական մեթոդների (օրինակ՝ հարցաշար, թեստ, դիտարկում) կիրառումը չպետք է սահմանափակվի ընդհանուր նկարագրով, այլ պետք է ունենա նախապես սահմանված չափանիշներ ու գնահատման պարզորոշ մեխանիզմներ, որոնք կապահովեն արդար և թափանցիկ գնահատում:

Դրական է, որ Քոլեջը ձգտում է կապ ստեղծել հետազոտական և ուսումնական գործընթացների միջև, սակայն կարգավորող մի շարք փաստաթղթերի կրկնությունները, ինչպես նաև դրանց չհամակարգվածությունը, կարող են խոչընդոտել այդ փոխկապակցվածության լիարժեք իրագործմանը: Բացի այդ, բենչմարքինգի հաստատված փորձի բացակայությունը սահմանափակում է արտաքին լավագույն փորձերի վերլուծության և ծրագրերի որակի համեմատական բարձրացման հնարավորությունները:

Ինչ վերաբերվում է կրթական ծրագրերի մշտադիտարկմանը, ապա քոլեջը մշակել է որոշակի փաստաթղթային հենք, սակայն վերջիններս պրակտիկայում լիարժեք կիրառություն չեն գտել: Մշտադիտարկման հիմնական գործող մեխանիզմները կիրառվում են մեկը մյուսից առանձին, ըստ էության չեն ամբողջացվում, ինչը հանգեցնում է ՄԿԾ-ների հատվածային բարելավումների: Մշտադիտարկման պարբերականության ապահովման, արդյունքների ընդհանրացման և գնահատման հստակ մեխանիզմների և պատասխանատուների ապահովումը թույլ կտա քոլեջին շարունակաբար բարելավել ՄԿԾ-ները և մրցունակ դարձնել աշխատաշուկայում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄԿԾ-ները համահունչ են առաքելությանը, առկա է ՄԿԾ-ների գնահատման և բարելավման որոշակի քաղաքականություն, որոշակիորեն վերանայվել են ՄԿԾ-ների ուսումնական պլանները, ներդրվել են ընտրովի առարկաներ, համապատասխանեցվել են դասավանդման ուսումնառության և գնահատման մեթոդները փոխկապակցելով ուսանողներին տրվող հանձնարարականների հետ, բարելավվել է ուսանողների գնահատման քաղաքականությունը, առկա են կրթական ծրագրերի մշտադիտարկման որոշ մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, քոլեջը բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Կապանի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

ԿՊԲՔ-ը հիմնական կրթության հիմքով ուսումնական գործընթացը իրականացվում է միայն անվճար համակարգում, իսկ միջնակարգ կրթության հիմքով՝ ինչպես վճարովի, այնպես էլ անվճար (պետպատվերի) համակարգերում: Ուսանողների հավաքագրման նպատակով իրականացվում են մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ, որոնց շրջանակում կազմակերպվում են դպրոց այցելություններ, բաց դռների օրեր, ինչպես նաև դպրոցների աշակերտներին հրավիրում են քոլեջ՝ ծանոթանալու կրթական ծրագրերին և ուսումնական միջավայրին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների հավաքագրման աշխատանքներում ներգրավված են պրակտիկայի և կարիերայի պատասխանատուն, դասավանդողները, ուսանողները և շրջանավարտները:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին դիմորդների թվի դինամիկան փոփոխական է եղել: 2020 և 2022 թվականներին ընդունելության ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 56 և 54 դիմորդ, ինչը համեմատաբար բարձր ցուցանիշ է: 2023 և 2024 թվականներին արձանագրվել է աճի միտում՝ դիմորդների թիվը հասնելով 59 և 58-ի: Աճը հատկապես նկատվում է «Քույրական գործ» և «Սոցիալական աշխատանք» մասնագիտությունների ուղղությամբ, ինչը, քոլեջի ներկայացուցիչների դիտարկմամբ, պայմանավորված է աշխատաշուկայի պահանջարկով և մասնագիտությունների սակավ ընտրությամբ:

Քոլեջում ներկայումս հիմնական և միջնակարգ կրթության հիմքով սովորում է 136 ուսանող, Օրենսդրական կարգավորումների համաձայն՝ ուսումնական խումբը կարող է ձևավորվել միայն այն դեպքում, եթե նվազագույնը 13 դիմորդ կա: Այնուամենայնիվ, քոլեջը որոշ մասնագիտությունների՝ «Ատամնատեխնիկական գործ», «Բուժական կոսմետոլոգիա»,

«Մանկաբարձական գործ», «Բուժական մերսում», «Լաբորատոր ախտորոշում» և «Դեղագործություն» (առկա), համար չի կարողանում ապահովել այս շեմը: Քոլեջը այս դժվարությունները պայմանավորվում է տարածաշրջանում բնակչության թվի նվազումով և այլ սոցիալական խնդիրներով: Այս հանգամանքը բերում է նրան, որ եթե համապատասխան կրթական ծրագրով խումբ չի ձևավորվում 13 ուսանողի նվազագույն շեմի չապահովման պատճառով, այն ուսանողները, ովքեր ցանկացել էին սովորել այդ մասնագիտությամբ, ստիպված են լինում փոխել իրենց ընտրությունը՝ ընտրելով այլ մասնագիտություն կամ այլ քոլեջ և կամ իրենց նախընտրած մասնագիտությամբ ուսում ստանալ այլ քաղաքում:

Վերջին հինգ տարիների վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների հեռացման հիմնական պատճառներից մեկը անհարգելի բացակայություններն են, որոնց հետևանքով դուրս է մնացել տասը ուսանող: Հեռացումների քանակը նվազեցնելու նպատակով քոլեջում 2023թ. ներդրվել է «Ուսանողների բացակայությունների լրացման» կանոնակարգը, ինչպես նաև իրականացվում է բացակայությունների և դրանց լրացման գործընթացի վերահսկողություն:

Քոլեջը ուսանողների կրթական կարիքների գնահատումն իրականացնում է հիմնականում հարցումների միջոցով, որոնք կազմակերպվում են Կարիերայի և որակի պատասխանատուների կողմից: Որպես կրթական կարիքների վերհանման լրացուցիչ մեխանիզմներ կիրառվում են նաև կուրսղեկների ինստիտուտը և ուսանողների հետ անմիջական շփումները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընդհանուր առմամբ վեր հանված կարիքների և դրանց հիման վրա նախատեսված բարելավումների միջև կապ է նկատվում: Օրինակ՝ իրականացվել է կրթական ռեսուրսների բարելավում, ձեռք է բերվել մասնագիտական գրականություն, ուսումնական նյութեր և համակարգիչներ՝ հիմնվելով վեր հանված կարիքների վրա:

Այնուամենայնիվ, որոշ դեպքերում կարիքների գնահատումը կատարվում է ոչ ինստիտուցիոնալ մեխանիզմներով, և կարիքները հիմնականում հայտնաբերվում են անմիջական շփումների ընթացքում: Բացի այդ, հարցումների արդյունքները ցույց են տվել, որ ուսանողները դժգոհություն են հայտնել ուսումնառության նյութերի սակավության և գրադարանի մասնագիտական գրքերի պակասի վերաբերյալ և այլն:

Ուսանողների կարիքների վերհանման գործընթացում կարևոր օղակ է նաև Ուսանողական խորհուրդը (ՈՒԽ): Օրինակ, ՈՒԽ-ի առաջարկով բարելավել է գործատուի մոտ գործնական պարապմունքների համար նախատեսված կաբինետ-լաբորատորիան: ՈՒԽ-ը նաև մասնակցում է ներքոլեջային խնդիրների վեր հանմանը, ինչպես օրինակ՝ ջեռուցման բարելավման, սնվելու կետի բացակայության և այլն:

Քոլեջում իրականացվում են նախաքննական խորհրդատվություններ, որոնց համար սահմանված է հստակ ժամանակացույց: Քոլեջի կողմից իրականացված հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողները կարևորում են խորհրդատվական պարապմունքների իրականացումը, և նրանց 13.7%-ը մասնակցում է այդ պարապմունքներին: Միևնույն ժամանակ, ինչպես պարզվել է փորձագիտական հանդիպումների ընթացքում, դասախոսները պատրաստակամ են անհրաժեշտության դեպքում աջակցել ուսանողներին՝ պատասխանելով նրանց հարցերին և տրամադրելով անհատական խորհրդատվություն:

Քոլեջում օտար լեզուների կարողությունների զարգացման ուղղությամբ նախատեսված առանձին լրացուցիչ պարապմունքներ ներկայումս չեն իրականացվում: Ուսանողների կարիքները հասկանալու նպատակով իրականացվել է հարցում՝ պարզելու, թե որոնք են ուսանողների նախընտրած օտար լեզուները:

Ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավվելու նպատակով նրանց հանձնարարվում են ռեֆերատներ և հետազոտական բնույթի աշխատանքներ: Հարկ է նշել, որ

աշխատանքի թեմաները առաջարկվում են դասախոսների կողմից իրենց դասավանդած մոդուլի շրջանակներում՝ հիմնականում մասնագիտական առարկաներից: Օրինակ, «Քույրական գործ» մասնագիտության ուսանողները իրականացրել են տարածաշրջանի հիվանդների թվի հավաքագրում և վերլուծություն՝ ուսումնասիրելով, թե տարվա որ շրջանում է առավել արտահայտված հիվանդությունների աճը: «Դեղագործություն» մասնագիտությունը իրականացրել հերբարիումների պատրաստումը իր փուլերով՝ բույսի հավաքում և չորացում: «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտության շրջանակներում պատրաստվել են կոսմետիկ դիմակներ և պրակտիկայում ուսումնասիրվել է դրանց ազդեցությունը ըստ մաշկի խնդիրների: Անհրաժեշտ է նշել, որ բոլոր առաջադրանքների կատարման մեջ գերակշռում է ուսանողի ինքնուրույն աշխատանքը:

Առկա է տնօրենին և վարչական աշխատակազմի ղեկավարներին դիմելու սահմանված ժամանակացույց: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողներն ազատ են դիմելու վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով: Քոլեջը հարցումների միջոցով նաև գնահատել է վարչական անձնակազմից ուսանողների բավարարվածությունը, ըստ որի ուսանողների մեծամասնությունը (95,8%-ը) տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, ովքեր լիովին (100%-ը) բավարարված են այդ ծառայություններից:

Կարիերայի ուղղորդման պատասխանատուն իր աշխատանքային պլանի համաձայն իրականացնում է դիմորդների և ուսանողների մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին, ինչպես նաև աջակցում է դիմորդներին դիմում-հայտերի լրացման գործում:

Կարիերայի ուղղորդման պատասխանատուն համագործակցելով ՄՄԾ տարածքային բաժնի հետ պարբերաբար իրազեկում է շրջանավարտներին թափուր աշխատատեղերի մասին, այդ թվում՝ քոլեջում առկա թափուր հաստիքների վերաբերյալ: Կարիերայի պատասխանատուն իրականացրել է իր գործունեության 2023-2024 թվականների արդյունքների վերլուծություն, որտեղ ներկայացվել են վերջին տարիների ուսանողների զբաղվածության տվյալները: Ըստ կարիերայի պատասխանատուի վերլուծության՝ 2023-2024 ուսումնական տարում շրջանավարտների 40%-ը աշխատանքի է անցել հենց նրա ուղղորդմամբ: Զբաղվածության ապահովման տեսանկյունից համեմատաբար բարձր են «Քույրական գործ» մասնագիտությամբ շրջանավարտների ցուցանիշները: Մասնավորապես՝ 2024 թվականի 8 շրջանավարտներից 2-ը շարունակում են ուսումը բուհերում՝ համապատասխան մասնագիտությամբ, 6-ը աշխատում են, որոնցից 4-ը՝ իրենց մասնագիտությամբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը պարբերաբար թարմացնում է շրջանավարտների բազան:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՒԽ-ն կազմված է առանձնացված հանձնախմբերից՝ բաղկացած ՈՒԽ նախագահից և երկու անդամներից, որոնք զբաղվում են իրենց ոլորտի համապատասխան աշխատանքներով՝ մասնագիտական կողմնորոշման խումբ, արտաքին կապեր, ներքին կապեր, մշակույթի և սպորտի, ազատ ժամանցի, սոցիալական աշխատանքի և գրադարանային: Օրինակ՝ արտաքին կապերի հանձնախումբը զբաղվում արտաքոլեջային երիտասարդական միջոցառումների վերաբերյալ իրազեկմամբ (ինտելեկտուալ խաղ և այլն), կապ է պահում Կապան քաղաքի երիտասարդների խորհրդի հետ: Գրադարանային հանձնախումբը աջակցել է քոլեջի գրքերի հաշվառման աշխատանքներին: Ուսանողական խորհուրդն իր կողմից նախատեսվող միջոցառումները ամրագրում է տարեկան աշխատանքային պլաններում՝ նշելով դրանց կատարման ժամկետները և պատասխանատուներին:

ՈՒԽ նիստերը անցկացվում են յուրաքանչյուր շաբաթ, նիստերը արձանագրվում են: ՈՒԽ-ն պլանավորում և քննարկում է տարբեր հարցեր իր նիստերի ընթացքում, ինչպիսիք են հանձնախմբերի գործունեությունը, նախագահի ընտրությունը, նախատեսվող միջոցառումները և այլն: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՈՒԽ նիստերի ընթացքում ուսանողների իրավունքների խախտման կամ պաշտպանությանն ուղղված հարցեր չեն քննարկվել,

սակայն ինչպես պարզ դարձավ ուսանողների իրավունքների վերաբերյալ ՈՒԽ-ը տեղեկացնում է հիմնականում նոր ընդունված անդամներին, ովքեր տեղեկատվությունը տարածում են իրենց կուրսերում: Հարկ է նշել, որ 2023թ. Քոլեջը մշակել է ուսանողի ուղեցույց, որտեղ հակիրճ ներկայացվում է քոլեջի առաքելությունը և տեսլականը, կառուցվածքը, ուսանողների իրավունքները և պարտականությունները, քոլեջում կիրառվող կարգերի ցանկը: Քոլեջը հարցում է անցկացրել նաև ուսանողների իրավական ակտերից իրազեկվածության վերաբերյալ, որի արդյունքները ցույց են տալիս, որ միջինացված տվյալներով ուսանողների 23.74% տեղյակ չեն, 38.58% մասամբ են տեղյակ, 37.68% լիովին տեղյակ են, հարկ է նշել, որ ուսումնական գործընթացին վերաբերող կարգերին ուսանողների տեղեկացվածությունը ավելի մեծ է:

Քոլեջի դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը աջակցում է ուսանողական խորհրդի աշխատանքներին, պլանավորվող միջոցառումների իրականացմանը: 2023-2024 տարվա ՈՒԽ-ի իրականացրած միջոցառումներից են եղել «Ոսկե աշուն» տոնակատարությունը, արշավ Վահանավանք, ինչպես նաև այցելություն ծերանոց և այլն: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողական խորհրդի գործունեության մասին իրազեկման միջոցառումները պասիվ են, և հիմնականում իրազեկումն իրականացվում է ՈՒԽ անդամ ավագների միջոցով:

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունները գնահատվում են հիմնականում հարցումների միջոցով: Վերլուծությունների ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ ուսանողների կողմից վեր հանված խնդիրները հիմնականում առնչվում են կրթական միջավայրի բարելավմանը, մասնավորապես՝ շենքային և լսարանային պայմանների կահավորմանը (վերջինիս ուղղությամբ քոլեջը որոշակի քայլեր է ձեռնարկում) և այլն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը տարբեր միջոցառումների և ծառայությունների միջոցով ձգտում է ապահովել ուսանողների կրթական կարիքների բավարարումն ու կարիերային աջակցությունը՝ խթանելով ուսանողակենտրոն միջավայրի ձևավորումը: Տվյալ ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ քոլեջում առկա են ուսանողների կարիքների վերհանման և արձագանքման հիմնական մեխանիզմներ, որոնք ներառում են հարցումներ, ուղղակի շփումներ, Ուսանողական խորհրդի ներգրավում և խորհրդատվական որոշ ծառայություններ: Այդուհանդերձ, ուսանողների թվի փոփոխականությունը և որոշ մասնագիտությունների խմբերի չձևավորվելու հանգամանքը մատնանշում են ուսանողների հավաքագրման ռազմավարական մոտեցումների անհրաժեշտություն:

Ուսանողների կրթական կարիքների գնահատումն առավելապես հիմնված է հարցումների և կուրսղեկների անմիջական շփումների վրա, սակայն մեթոդաբանական բազմազանության ու տվյալների խորքային վերլուծության պակասը կարող են հանգեցնել որոշ խնդիրների անտեսման, իսկ դրա հիմքով նախատեսվող բարելավումները հաճախ դուրս են մնում համակարգային մոտեցումից:

Թեև Ուսանողական խորհուրդն ունի հանձնախմբերով կազմակերպված գործունեություն, այն դեռևս ունի սահմանափակ ներգործություն ուսանողների իրավունքների պաշտպանության և դրանց վերաբերյալ իրազեկման հարցերում, ինչի հետևանքով նրա ներուժը լիարժեքորեն չի իրացվում:

Կարիերայի ստորաբաժանման գործունեությունը վկայում է շրջանավարտների զբաղվածության որոշակի առաջընթացի մասին, սակայն աշխատաշուկայի պահանջարկի շարունակական վերլուծության և ուսանողական կարիքների բազմակողմանի ուսումնասիրության բացակայությունը կարող են սահմանափակել ձեռքբերումների երկարաժամկետ զարգացումը:

Կրթական, խորհրդատվական և օժանդակող ծառայությունների որակի համակողմանի գնահատման մեխանիզմների բացակայությունը բարդացնում է դրանց արդյունավետության

վերլուծությունն ու շարունակական կատարելագործումը, ինչը սահմանափակում է ուսանողակենտրոն միջավայրի կայացման հնարավորությունները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Կապանի պետական բժշկական քոլեջը՝ ունի ուսանողների հավաքագրման ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմներ, որոշակի վեր են հանվում ուսանողների կրթական կարիքները, իրականացվում են խորհրդատվական ծառայություններ, առկա է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց, գործում են կարիերային նպաստող ծառայություններ, իրականացվել են ուսումնառության և հետազոտության փոխկապակցման քայլեր՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է Չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Ըստ ՄՈՒՀ-ի 2022-2027թթ.-ի ռազմավարական ծրագրի՝ Քոլեջն իր առջև նպատակադրել է արդյունավետ կառավարման համակարգի գործարկում, համակազմի շարունակական համալրում որակյալ փորձառու կադրերով: Սահմանված նպատակի իրագործման համար ՌԾ-ում սահմանվել են հետևյալ խնդիրներն ու համապատասխան գործողությունները. Քոլեջի արդյունավետ կառավարման կառուցվածքի սահմանում և գործարկում, համակազմի շարունակական համալրում փորձառու կադրերով, ինչպես նաև մասնագիտական և դասավանդման որակների արդիականացում և բարելավում: Քոլեջի դասախոսական համակազմի ընտրությունն իրականացվում է՝ ըստ ընդունելության կարգի՝ «Մանկավարժական աշխատողի (բացառությամբ զինվորական աշխատանքի) ընդունվելու» (2019թ.): Դասախոսական կազմը համալրվում է մրցույթային կարգով՝ ըստ «Միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման» կարգի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թափուր հաստիքների համալրման համար հայտարարվում և իրականացվում են մրցույթներ, որոնց մինչ այժմ հիմնականում մեկ թեկնածու է մասնակցել: Մրցույթի ընթացքում տեղի է ունենում բանավոր հարցազրույց թեկնածուի հետ, որից հետո մրցութային հանձնաժողովի քվեարկությամբ թեկնածուն համալրում է քոլեջի դասախոսական կազմը: Հաշվի է առնվում դասախոսի փորձը և նրա կապը պրակտիկ ոլորտի հետ: Քոլեջում դասավանդում է 31 դասախոս, որոնցից 26-ը ունեն բարձրագույն կրթություն, իսկ 5-ը՝ միջին մասնագիտական: Քոլեջի թվով 10 դասախոսներ գործատուներ են, իսկ տարբեր տարիների շրջանավարտներից 8-ը ներկայումս դասավանդում են քոլեջում:

Ըստ կրթական ծրագրերի դասախոսներին ներկայացվող հստակ պահանջներ սահմանված չեն, քոլեջը առաջնորդվում է ՊԿՉ-ներում դասախոսական կազմին ներկայացվող նվազագույն պահանջներով: Դասախոսական կազմի ընտրության ու համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դասախոսների մասնագիտական որակավորումները հիմնականում համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դասախոսական անձնակազմը

դասավանդում է երեքից մինչև տասներկու մոդուլ: Օրինակ՝ կան կրթական ծրագրեր, որտեղ հիմնական մասնագիտական մոդուլները դասավանդվում են 1-2 դասավանդողների կողմից, մասնավորապես «Բուժական կոսմետոլոգիա» ՄԿԾ-ում:

ՄՈՒՀ-ն ունի «Սկսնակ դասավանդողների հետ տարվող աշխատանքների» ընթացակարգ (2021թ.): Մեթոդիստի և ամբիոնի վարիչների կողմից կազմակերպվում է սկսնակ դասավանդողների ծանոթացումը դասավանդվող մոդուլի ծրագրին՝ փաստաթղթերին, պարտականություններին, իրավունքներին, ներքին կանոնակարգերին, համագործակցային ուսուցման մեթոդներին, գնահատման սանդղակին, իրականացվում են փոխադարձ դասալսումներ, լավագույն փորձի տարածման նպատակով:

Քոլեջում հաստատվել են մի շարք կարգեր, որոնք ուղղված են դասախոսական կազմի գնահատման, խրախուսման և պատասխանատվության շրջանակների ապահովմանը: Դրանց թվում են «Ղեկավար և մանկավարժական աշխատողների գնահատման նրանց խրախուսման (այդ թվում ֆինանսական շահադրդման) կամ պատասխանատվության ենթարկման կարգ» (2018 թ.), ընթացակարգը դիտարկվում է քոլեջի ղեկավար և մանկավարժական աշխատողների խրախուսման կամ պատասխանատվության ենթարկելու գործիքակազմ՝ մասնագիտական կարողությունները կատարելագործելու, համապատասխան աջակցություն ապահովելու և սահմանված պահանջները վերանայելու նախապայման: Այդուհանդերձ, վերոնշյալ կարգը լիովին չի գործարկվել, կարգը նախատեսում է գնահատման բազմափուլ գործընթաց, սակայն հստակ չի մեկնաբանվում միավորների ձևավորման ընթացակարգը, որը հիմք է հանդիսանում խրախուսման իրականացման և պատասխանատվության ենթարկման համար, իսկ խրախուսման և տույժի ենթարկման համար նախատեսված սանդղակները համանման են: Կարգի կիրառմամբ դրամական խրախուսումներ չեն իրականացվել քոլեջում, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արտաբյուջեի միջոցներից կախված դասավանդողներին տրվում են լրավճարներ:

Քոլեջը դասավանդողների գնահատումը իրականացնում է «Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման ընթացակարգի» (2021թ.) համաձայն: Դասախոսական կազմի գնահատման մեխանիզմներն են՝ ուսանողների հարցումները, դասալսումները, փոխադարձ դասալսումները և բաց դասերը: Դասալսումներն իրականացվում են ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի, մեթոդիստի, ամբիոնի վարիչի և դասախոսների կողմից: Քոլեջն ունի սահմանված «Դասալսումների ընթացակարգ» (2021թ.), ինչպես նաև դասալսումների և փոխադարձ դասալսումների ժամանակացույց ու դասալսումների անցկացման միասնական ձևաթերթ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում իրականացվում են փոխադարձ դասալսումներ՝ ներքին լավ փորձը տարածելու նպատակով: Դասալսումների արդյունքները քննարկվում են դասախոսների մասնակցությամբ՝ լավագույն փորձի փոխանակման, առկա խնդիրների վերհանման, դրանց շտկման և բարելավման նպատակով: Օրինակ՝ դասավանդման և դասի կազմակերպման մեթոդների սխալ ընտրությունը, ուսանողների թերի ներգրավումը և այլն: Նաև պարզ դարձավ, որ ներքոլեջային փորձի փոխանակման միջոցառումները պլանավորված են, սակայն լիովին կանոնակարգված չեն, քանի որ ժամանակացույցում կատարման ժամկետները հստակեցված չեն: Դասախոսական կազմը ներգրավված է նաև կարիքների գնահատման հարցումներում, որը միտված է դասավանդման որակի բարելավմանը (օրինակ՝ ֆունկցիոնալ մարմիններից և ենթակառուցվածքային պայմաններից աշխատողների բավարարվածության հարցում):

Քոլեջի նախահաշվի և բյուջեի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ֆինանսական միջոցներ չեն հատկացվել դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների համար: Քոլեջի դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպված մեթոդական վերապատրաստումներին: Ուսումնասիրությունները ցույց տվեցին,

որ վերջին հինգ տարիների ընթացքում դասախոսները մասնագիտական վերապատրաստման ծրագրերի չեն մասնակցել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը քայլեր է ձեռնարկում դասախոսական կազմի մասնագիտական զարգացման ապահովման ուղղությամբ. մշակվել է «Մանկավարժական աշխատողի ատեստավորման» կարգ (2023թ.), որի համաձայն յուրաքանչյուր դասախոս պարտավոր է 5 տարին մեկ անցնել ատեստավորում: Կարգը դեռ ներդրման փուլում է, և դրա կիրառման արդյունքները դեռևս գնահատված չեն:

Անդրադառնալով դասախոսական կազմի կայունությանը՝ հարկ է նշել, որ դասախոսական կազմը երիտասարդացման միտում ունի: Ներկայումս քոլեջում դասավանդողների միջին տարիքը կազմում է 48 տարեկան, դասավանդողների մոտ 38%-ը 60 տարեկան և ավելի բարձր տարիք ունեն, 16%-ը միչև 35 տարեկան են, Քոլեջում դասախոսների բազա առկա չէ: Քոլեջը 2023թ. ընդունել է հիմնական դասախոսական կազմի կայունության ապահովման ընթացակարգը, որտեղ առանձնացվել են քոլեջի գործողությունները որոնք միտված են ՊԴ կազմի կայունության ապահովմանը և բարձրակարգ մասնագետներով համալրմանը, սակայն տվյալ ընթացակարգի գործածման արդյունքները դեռևս հնարավոր չէ գնահատել:

Քոլեջի հաստիքային վարչական աշխատակիցները իրենց վարչական գործառույթների իրականացմանը զուգընթաց ներգրավված են նաև դասավանդման գործընթացներում: Ուսումնաօժանդակ և վարչական կազմերի ներկայացուցիչների գործառույթները սահմանվում են պայմանագրերով և պաշտոնների անձնագրերով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, քոլեջի կողմից դասախոսական անձնակազմի մասնագիտական որակների համապատասխանությունը նախանշված ուսումնառության արդյունքներին, ինչը կարող է նպաստել ուսումնական գործընթացի բարձր որակին: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը կարևորում է, որ դասախոսական անձնակազմին ներկայացվող պահանջներն ավելի հստակ ձևակերպվեն ըստ կրթական ծրագրերի, ինչը կարող է ապահովել ուսուցման գործընթացի առավել համակարգված և նպատակային կազմակերպում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, դասախոսական անձնակազմի մեթոդական զարգացման ուղղությամբ իրականացվող որակավորման բարձրացման դասընթացներն ու ՄԿՈՒԶԱԿ-ի վերապատրաստումները: Այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ վերջին տարիներին դասախոսների վերապատրաստումները սահմանափակվել են միայն մեթոդական ուղղությամբ, մասնագիտական վերապատրաստումները քոլեջում կանոնակարգման կարիք ունեն, միևնույն ժամանակ մասնագիտական վերապատրաստումների կազմակերպումը կարող է նպաստել ժամանակակից պահանջներին համապատասխան դասավանդման որակի բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն փաստը, որ քոլեջի դասախոսական կազմում ներառված են համատեղող դասախոսներ, որոնք հիմնականում գործատուներ են. սա կարող է նպաստել դասախոսների պրոֆեսիոնալ կարողությունների և հմտությունների զարգացմանը, ինչպես նաև ուսանողների մոտիվացիայի բարձրացմանը: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը կարևորում է գործատու դասախոսների թվի ավելացումը, ինչը կարող է հանգեցնել կրթական ծրագրերի և աշխատաշուկայի պահանջների միջև ավելի արդյունավետ կապի հաստատմանը: Գործատուների հետ փորձի փոխանակման ծրագրերը կարող են այլընտրանք լինել մասնագիտական վերապատրաստումների իրականացման համար: Փորձագիտական խմբի համար գնահատելի է մոտիվացված դասախոսական կազմի առկայությունը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում նաև երիտասարդ մասնագետներով համալրվելու հանգամանքը, կարևոր է նաև մեթոդիստի և ամբիոնի վարիչի իրականացրած աշխատանքները սկսնակ դասավանդողների հետ, սակայն հստակ պլանավորման

բացակայությունը վտանգում է գործընթացի արդյունավետ և թիրախային կազմակերպումը: Փորձագիտական խումբը դրական է համարում, դասախոսների ու ուսումնաօժանդակ անձնակազմի դերի ու պատասխանատվության գիտակցումն ու նրանց աշխատանքի գնահատման մշակույթի առկայությունը, ինչը կարող է նպաստել արդյունավետ աշխատանքի և բարձր դասավանդման որակի ձևավորմանը: Սակայն, փորձագիտական խմբի կողմից կարևորվում է, գնահատման գործընթացում հստակ ընթացակարգերի առկայությունը, քանի որ դրանք կարող են նպաստել գնահատման օբյեկտիվության, արդյունավետության և ուսումնական գործընթացի շարունակական բարելավման ապահովմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը սահմանել է դասախոսական կազմի ընտրության, գնահատման և խրախուսման ընթացակարգեր, մշակում է մասնագիտական զարգացմանն ուղղված նոր կարգեր, պարբերաբար իրականացնում է դասալսումներ և փոխադարձ դասալսումներ՝ լավագույն փորձի տարածման նպատակով, ինչպես նաև քայլեր է ձեռնարկում դասախոսական կազմի երիտասարդացման ուղղությամբ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է Չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

Քոլեջի 2022-2027թթ. ՌԾ-ում հետազոտությունը որպես առանձին ռազմավարական նպատակ սահմանված չէ, սակայն Կրթական գործունեություն ոլորտում առաջադրված է խնդիր 2.2-ը «Քոլեջի կողմից իրականացվող ՄԿԾ-ների բարելավում՝ ՀՀ ՈԱՇ-ին, աշխատաշուկայի արդի պահանջներին և միջազգային չափանիշներին համապատասխան», որի լուծման համար քոլեջը նախատեսում է համապատասխանեցնել ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքները ՈԱՇ-ի բնութագրիչներին: Այս համատեքստում քոլեջը իրականացրել է որոշակի քայլեր միտված ուսանողների հետազոտական, վերլուծական և ստեղծագործական կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

2022թ.-ից քոլեջը որոշակիորեն կանոնակարգել է հետազոտական աշխատանքների իրականացումը, մշակվել է փաստաթղթային հենք՝ «Հետազոտական աշխատանքներ անցկացնելու» քաղաքականությունը, «Ուսանողների և դասախոսների հետազոտական գործունեության կանոնակարգը», և «Հետազոտական աշխատանքի պատրաստման և ներկայացման» կանոնակարգը, «Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմները»: Քաղաքականությունների և կանոնակարգերի համադրված ուսումնասիրությունը վկայում է, որ դրանց միջև առկա են բովանդակային կրկնություններ: Մասնավորապես, քոլեջը մշակել է մի քանի փաստաթուղթ (օրինակ, «Հետազոտական աշխատանքի պատրաստման և ներկայացման» և «Ուսանողների և դասախոսների հետազոտական գործունեության կանոնակարգում»), որոնցում ներկայացվող քայլերն ու մեխանիզմները հաճախ համընկնում են կամ ներկայացվում են տարբեր ձևակերպումներով: Միևնույն ժամանակ, «Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմները» փաստաթուղթը լիարժեք կերպով չի ամփոփում վերոնշյալ մեխանիզմները, ինչի արդյունքում անհրաժեշտ

տեղեկատվությունը և մեկնաբանությունները հիմնականում կարելի է գտնել մյուս փաստաթղթերում:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ հետազոտական, ինքնուրույն գործնական աշխատանքների/առաջադրանքների, ռեֆերատիվ աշխատանքների գնահատման հստակ մեթոդաբանություն և բաղադրիչներ քոլեջում դեռևս մշակված չէ: Վերոնշյալ կանոնակարգերը նաև չեն տարանջատում դասախոսի և ուսանողի հետազոտական գործունեությունը, դրանք հիմնականում դիտարկվում են միասնական ուսանողի և դասախոսի համատեղ հետազոտական աշխատանքների կամ առարկայի մոդուլի շրջանակներում տրվող հետազոտական բնույթի հանձնարարականների իրականացման տեսանկյունից:

Քոլեջը ուսումնադաստիարակչական աշխատանքների և կազմակերպման աշխատանքների համալիր պլանում, փորձում է ամբիոնների միջոցով կազմակերպել և պլանավորել ուսանողների հետազոտական աշխատանքներում ներգրավվածությունը, այդուհանդերձ փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործընթացները լիովին կանոնակարգված չեն:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՄՈՒՀ-ում հետազոտական աշխատանքը թեև չի հանդիսանում մասնագիտական մոդուլների պարտադիր բաղադրիչ մաս, սակայն դասախոսների կողմից ուսանողների ինքնուրույն աշխատանքներում հաճախ ընդգրկվում է հետազոտական բաղադրիչը: Տարբեր առարկաների/մոդուլների (այդ թվում՝ հանրակրթական, ընդհանուր մասնագիտական, և մասնագիտական) շրջանակներում տրվում են վերլուծական քննադատական մտածողություն ձևավորող առաջադրանքներ, որոնք նաև հանդիսանում են գնահատման բաղադրիչներ՝ օրինակ՝ իրավիճակային խնդիրները, ռեֆերատներ, պրակտիկայում հանդիպող օրինակների քննարկում, ստեղծագործական բնույթի հանձնարարականներ:

Ըստ կրթական ծրագրերի ներկայացվել են որոշ հետազոտական աշխատանքներ՝ օրինակ «Դեղագործություն» մասնագիտության մեջ «Ֆարմակոգնոզիա» մոդուլի շրջանակներում իրականացվել է հետազոտական աշխատանք, որի շրջանակներում ուսանողները փորձարարական ճանապարհով ուսումնասիրել են եղինջի թրմի ազդեցությունը կոսմետոլոգիայում, այդ աշխատանքներին ներգրավվել են նաև «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտության ուսանողները, թուրմը առաջարկելով չոր, խնդրահարույց և նորմալ մաշկ ունեցող որոշակի խմբի մարդկանց և 10 օրվա ընթացքում և դիտարկել են արդյունքները: Հետազոտության արդյունքները արձանագրվել են և գնահատվել են դրական:

«Քույրական գործ» կրթական ծրագրի ուսանողները իրականացրել են հետազոտական աշխատանք Կապանի բժշկական կենտրոնում «Սիրտ անոթային հիվանդությունները» վերնագրով, որի շրջանակներում ուսանողները 12 օրվա ընթացքում ուսումնասիրել են Կապանի ԲԿ-ում թերապևտիկ և վիրաբուժական բաժանմունքների բուժառուների շարժը, վեր հանվել ռիսկային խմբերը և առավել տարածված հիվանդությունները: Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մոդուլի դասավանդման ընթացքում ուշադրություն է հատկացվել հիպերտոնիկ հիվանդության և սիրտ-թոքային անբավարարության առաջացման պատճառներին և կանխարգելման ուղիներին:

Քոլեջը 2019թ. մշակել է «Ակադեմիական ազնվության պահպանման» կարգը, որը սահմանում է ակադեմիական ազնվության պահպանումը ապահովելու, խախտման և դրանց լուծման դեպքերը: Հարկ է նշել, որ կարգը դեռևս լիովին ներդրված չէ ուսումնական գործընթացում, ինչպես նաև այն հստակ փոխկապակցված չէ հետազոտական աշխատանքների գնահատման գործընթացի հետ: Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված աշխատանքներում երբեմն բացակայում են եզրակացությունները, տեսական վերլուծության և ռեֆերատների իրականացման ժամանակ օգտագործված աղբյուրների հիշատակումը:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ վերջին հինգ տարիների ընթացքում դասախոսները չեն իրականացրել մասնագիտական, մեթոդական ձեռնարկների և ուղեցույցների մշակում, ինչպես նաև չի իրականացվել մասնագիտական ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրություն: Այս տեսանկյունից հարկ է նշել, որ քոլեջում առկա չեն դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման քաղաքականություն և ընթացակարգեր: Դասախոսական կազմը չունի տպագրված հետազոտական աշխատանքներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը փորձ է արել փոխկապակցել ուսումնառությունը և հետազոտությունը, մշակելով անհրաժեշտ «Հետազոտական աշխատանքներ անցկացնելու» քաղաքականությունը, ինչպես նաև ուսանողների և դասախոսների հետազոտական գործունեության կանոնակարգերը, ինչը կնպաստի հետազոտական բաղադրիչի դերի ամրապնդմանը և ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը որոշակի առարկաների շրջանակներում կիրառում է հետազոտական բնույթի վերլուծական և քննադատական մտածողություն զարգացնող առաջադրանքներ, այնուամենայնիվ խումբը գտնում է, վերջիններիս փոխկապակցումը ուսումնառության ակնկալվող արդյունքների հետ, կնպաստի կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացմանը: Մյուս կողմից, առաջադրանքների գնահատման հստակ չափանիշների առկայությունը հնարավորություն կտա ուսանողներին հասկանալու իրենց առաջընթացը, բարելավել հետազոտական աշխատանքների որակը, ինչպես նաև դասախոսներին՝ արդար և թափանցիկ գնահատելու ուսանողների ձեռքբերումները:

Խումբը դրական է համարում, որ որոշ մասնագիտությունների շրջանակներում իրականացվել են հետազոտական աշխատանքներ, որոնք ուղղված են տարածաշրջանին բնորոշ խնդիրների ուսումնասիրությանը, այնուամենայնիվ խումբը գտնում է, որ անհրաժեշտ է հետազոտական աշխատանքներում ապահովել ակադեմիական ազնվության կանոնակարգի դրույթները, ուսանողների ինքնուրույն վերլուծությունները և եզրակացությունները, ինչը կնպաստի հետազոտական մտածողության ձևավորմանն ու գործնական հմտությունների զարգացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ դասախոսական կազմի հետազոտական գործունեությունը խթանող ընթացակարգերի և մեխանիզմների առկայությունը կնպաստի դասախոսի մասնագիտական զարգացմանը և ուսումնական գործընթացի արդիականացմանը: Բացի այդ, դասախոսական կազմի կողմից մասնագիտական, մեթոդական ձեռնարկների ու ուղեցույցների մշակումը կարող է նպաստել ուսումնառության նյութերի բազայի համալրմանը:

Եզրահանգում. Հաշվի առնելով, որ քոլեջը սահմանել է հետազոտական գործունեության իրականացման քաղաքականություն, մշակել է հետազոտական աշխատանքների իրականացման կանոնակարգեր, ապահովել է վերլուծական և ստեղծագործական հմտությունները զարգացնող առաջադրանքները՝ մասնագիտական և հարակից մոդուլներում/առարկաներում և որոշակի քայլեր է իրականացվել հետազոտության և ուսումնառության կապը ձևավորելու նպատակով՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է Չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջի ենթակառուցվածքների և ռեսուրսների բարելավման ուղղությամբ նպատակները և խնդիրները ամրագրված են 2022-2027թթ. ՌԾ-ի շենքային պայմաններ և նյութատեխնիկական բազա և ֆինանսատնտեսական գործունեություն ուղղությունների ներքո: Որպես խնդիրներ սահմանվել են՝ շենքի հիմնանորոգումը, լսարանների կաբինետների և լաբորատորիաների տեխնիկապես վերզինումը գրադարանի արդիականացումը, քոլեջի ֆինանսական միջոցներ անհրաժեշտ հոսքի ապահովումը:

Քոլեջն ունի 2798,6 մ² ընդհանուր մակերեսով տարածք: Այն ներառում է 19 լսարան-կաբինետներ, որոնցից են ընդհանուր մասնագիտական՝ Համակարգչային օպերատորական գործի, Լեզուների, ընդհանուր և բժշկական հոգեբանության, Սոցիալ-տնտեսագիտական, Ուսուցման տեխնոլոգիական միջոցների, ՆԶՊ, Աղետների բժշկության, Առաջին բուժօգնության իրականացման: Մասնագիտական կաբինետներն են՝ Դեղաբանության և ԴԷԿ, Թերապիայի, Վիրաբուժության, Մանկաբարձության, Մանկաբարձության և գինեկոլոգիայի, Մաշկային վարակիչ հիվանդությունների, Մեթոդական, Գունանկար և գծանկար, Գեղազարդական կոսմետոլոգիայի, Բուժական կոսմետոլոգիայի, Նյութագիտության, Բուժական մերսման, Սոցիալական աշխատանքի կազմակերպման կաբինետները: Բացի այդ, քոլեջն ունի 5 գործնական պարապմունքների լսարաններ, որոնք ներառում են Ընտանեկան բուժքույրության հիմունքների, Մերսման, Վիրաբուժության, Թերապիայի, Դիմահարդարման և կոսմետիկ պրոցեդուրաների լսարանները: Քոլեջում գործում են նաև 11 լաբորատորիաներ, որոնք բաժանվում են ընդհանուր մասնագիտական և մասնագիտական լաբորատորիաների: Ընդհանուր մասնագիտական լաբորատորիաներն են՝ ներառյալ Հանրակրթական առարկաների՝ Կենսաբանության և ֆիզիկայի, Քիմիայի, ընդհանուր մասնագիտական՝ Քիմիայի (օրգանական, անօրգանական և անալիտիկ), Մարդու անատոմիայի, ֆիզիոլոգիայի և պաթոլոգիայի, Հիգիենայի, մանրէաբանության և իմունաբանության: Մասնագիտական լաբորատորիաներն են՝ Կոսմետոլոգիական նյութաբանության, Դեղաձևերի պատրաստման տեխնոլոգիայի, Դեղաբանության, Ֆարմակոգնոզիայի և բուսաբանության, Գիպսավորման և փայլեցման, Ատամնատեխնիկական, Սոցիալական աշխատանքի լաբորատորիաները: Բացի ուսումնական ենթակառուցվածքներից, քոլեջն ունի գրադարան, արխիվ, ակտերի դահլիճ, մարզադահլիճ, մարզահրապարակ, կաթսայատուն, ուսուցչանոց, վարչական օղակների կաբինետներ, ճաշարան և դեղատնային կրպակ: Համակարգչային լսարանն ունի 6 ստացիոնար և 1 դյուրակիր համակարգիչ, որոնք ապահովված են ժամանակակից ծրագրային ապահովմամբ: Դյուրակիր համակարգիչներ առկա են նաև «Դեղաձևերի տեխնոլոգիա, ֆարմակոգնոզիա» և «Աղետների բժշկության և առաջին բուժօգնության» կաբինետներում:

Քոլեջը 2021թ. իրականացրել մասնաշենքերի տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության գնահատում («ՀՀ ԱԻՆ Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն»), որի արդյունքները փաստում են, որ մասնաշենքերը ենթակա են շահագործման, այդուհանդերձ նաև գնահատվել շենքի ֆիզիկական մաշվածությունը, որը փաստում է, որ անհրաժեշտ է հիմնանորգում և մասնաշենքերի «սեյսմազինվածության բարձրացում»: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջի դահլիճը և մարզադահլիճը շահագործման ենթակա չեն՝ ունեն կապիտալ վերանորոգման կարիք: Քոլեջի մասնագիտական կաբինետները և լաբորատորիաները հիմնականում համալրված են անհրաժեշտ ուսումնական պարագաներով և մուլյաժներով (վերակենդանացման տիկնիկներ, մանեկեն մեծահասակի և մանկական, դեֆիբլիրյատոր, բժշկական գործիքներ սարքավորումներ, ուսումնական մուլյաժներ՝ ձեռքի, ներերակային ներսրսկման, վերքերի մուլյաժներ և այլն): Այդուհանդերձ որոշ կաբինետներ սարքավորումներով, նյութատեխնիկական միջոցներով լիարժեք ապահովված չեն, օրինակ՝ քիմիայի լաբորատորիան: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ օրինակ՝ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության համար քոլեջը ունի անհրաժեշտ կաբինետներ, լաբորատորիաներ և սարքավորումներ:

Այնուամենայնիվ, այս ռեսուրսները ներկայումս չեն օգտագործվում, քանի որ տվյալ մասնագիտությամբ ուսանողներ չեն համալրվել:

Քոլեջի գրադարանն ունի շուրջ 13413 միավոր գրականություն, այդ թվում՝ դասագրքեր (115), գեղարվեստական գրքեր (7275), ծրագրային և ուսումնամեթոդական մասնագիտական գրականություն (5919): Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրադարանում առկա գրականությունը հիմնականում հայերենով և ռուսերենով է: Համաձայն ինքնավերլուծության զեկույցի գրադարանային ֆոնդը պարբերաբար թարմացվում է, վերջին ձեռքբերումը եղել է 2023թ.՝ 45 անուն դասագիրք, և 5 ուսումնական ձեռնարկ՝ «Անվտանգություն և առաջին բուժօգնություն»: Փորձագիտական այցից և ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ գրադարանը մասնագիտական ժամանակակից գրականության պակաս ունի, ինչպես օրինակ «Դեղագործություն» մասնագիտության համար, իսկ սոցիալական աշխատանք մասնագիտության համար բացակայում է անհրաժեշտ մասնագիտական գրականությունը, դասավանդողները օգտվում են օտարալեզու գրականությունից, մշակվում են դասախոսության նյութեր, որոնք տրամադրվում են ուսանողներին: Գրադարանը թվայնացված չէ, այլ էլեկտրոնային գրադարանների հետ քոլեջը դեռևս չի անդամակցում: Քոլեջում առկա է ընթերցասրահ:

Քոլեջն իր դեղատային կրպակում անցկացնում է «Դեղագործություն» կրթական ծրագրի դասերը և պրակտիկաները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դեղատնային կրպակի դեղորայքը համալրվում է գնումների միջոցով, որի պատճառով դեղերի տեսականին բազմազան չէ, սակայն ուսանողները հնարավորություն ունեն ընտրելու այլ պրակտիկայի վայր քոլեջի հետ համաձայնեցված: Գործնական պարապմունքների, պրակտիկաների իրականացման համար քոլեջն օգտագործում է նաև գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները՝ Կապանի բժշկական կենտրոնում անհատույց օգտագործում է 4 կաբինետներ՝ ֆիզիոթերապիայի, մաշկային հիվանդությունների, նեղ մասնագիտական առարկաների, գործնական պարապմունքի 2 լսարան՝ հիվանդանոցի ուսումնական բազա:

Քոլեջի «Աղետների բժշկության և առաջին բուժօգնության» կաբինետում առկա է մեկ պրոյեկտոր իր էկրանով: Փորձագիտական այցից և ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ նաև, որ քոլեջն իրականացրել է լսարանային ֆոնդի (գրասենյակային գույք, վարչական սարքավորումներ) որոշ բարելավումներ, սակայն այդ ծախսերը վերջին երեք տարիների ընթացքում չի գերազանցում 1,42%-ը: Քոլեջը որոշակիորեն փորձում է իր ռեսուրսները համալրել նաև ծրագրերի շրջանակներում, օրինակ՝ քոլեջի դասախոսը մասնակցել է Վրաստանում կայացած վերապատրաստմանը, որի արդյունքում կազմակերպիչ կողմը քոլեջին նվիրաբերել է մեծահասակի մանեկեն «Աղետների բժշկության և առաջին բուժօգնության» կաբինետի համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը համագործակցում է «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի հետ, ինչպես նաև «Ռոնի մասնագիտական ուսուցման ընկերության» հետ: Համագործակցության արդյունքում ֆրանսիայից ժամանած պատվիրակությունը (քաղաք Սենթ Էթիեն) 2023թ. և 2024թ. այցելել է քոլեջ, հանդիպել շահագրգիռ կողմերի հետ, ինչպես նաև դիտարկվում է քոլեջում սիմուլյացիոն կենտրոն հիմնելու նախագիծը, որի աշխատանքները պլանավորման փուլում են:

Քոլեջի եկամուտների և ծախսերի տվյալների համաձայն՝ 2023թ. կտրվածքով ընդհանուր ծախսերի 88,7%-ը բաժին է ընկնում աշխատավարձի ֆոնդին ներառյալ մասնագիտական ծառայությունները՝ աշխատավարձ (քաղիրավական պայմանագրեր): Հարկ է նշել, որ 2021-2023թթ. ընթացքում աշխատավարձային ֆոնդը 85,7%-ից աճել է 87,8%-ի, ԻՎ տվյալների համաձայն 2023թ-ին դասախոսների աշխատավարձը բարձրացվել է 32%-ով: Ըստ 2022-2023թթ. ՄՈՒՀ-ի առաքելության հիմնական ուղղությունների բյուջեի բաշխման տվյալների՝

վերապատրաստումների իրականացման համար քոլեջը դրամական հատկացումներ չի տրամադրել: Հիմնականում ծախսեր են իրականացվում հետևյալ ուղղություններով, գույքի՝ ներառյալ գրասենյակային գույք և սարքավորումներ, տնտեսական պարագաներ (1,56 %), ինչպես նաև ուսումնական նյութերի (0,48%) ձեռքբերումը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում առկա են դրամաշնորհային ծրագրերի մասնակցության, ֆինանսավորման այլ մոդելների կիրառման դեպքեր: Քոլեջը մասնակցել է դրամաշնորհային ծրագրի (2018թ.), իրականացրել է Կապան քաղաքի միջին բժշկական անձնակազմի վերապատրաստումներ, ծրագրի շրջանակներում վերանորոգվել է քոլեջի 3 լսարաններ: 2023թ. տվյալներով քոլեջի բյուջեի եկամուտների 82,87%-ը կազմում են պետական ֆինանսավորումից մուտքերը (ներառյալ՝ պետական պատվեր, ուսման վճարի փոխհատուցումներ և կրթաթոշակներ), 15,6 %-ը՝ ուսանողների վարձավճարներից մուտքերը: Որպես լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր, քոլեջն իրականացնում է դեղատնային կրպակի գործունեություն՝ 0,58 %, իսկ այլ գործառնական եկամուտները կազմում են՝ 0,93%: Քոլեջը պլանավորում է իրականացնել կարճաժամկետ դասընթացներ իր կրթական ծրագրերի ուղղություններին համապատասխան:

Քոլեջը կրթական ծրագրերի համար պահանջվող նվազագույն ռեսուրսների հաշվարկ չի իրականացրել ինչպես նաև հստակ չէ ուսանողների ո՞ր քանակն է ապահովում ինքնածախսածածկում: Վերջին տարիներին իրականացվել է նաև ուսման վարձի փոփոխություն:

Քոլեջն արտաքին շահակիցների հետ հաղորդակցումն ապահովում է «Mulberry» համակարգով: Ներքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է թղթային տարբերակով, կամ էլեկտրոնային փոստի կիրառմամբ: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ քոլեջում ներդրված չէ: Քոլեջը ձեռք է բերել Հաշվապահական հաշվառման ավտոմատացված «ՀԾ-Հաշվապահ-7» ծրագիրը (2017թ.), ներդրվել են «TAXSERVICE» համակարգչային ծրագրերը, որոնց միջոցով իրականացվում են ֆինանսական և հարկային գործընթացները:

Քոլեջը ապահովում է անվտանգային միջավայր, առկա է պահակակետ, իսկ 2023թ. մշակվել է «ԿՊԲՔ ՊՈԱԿ-ի աղետների և ռիսկերի կառավարման» պլանը, որը սահմանում է արտակարգ իրավիճակներում պատասխանատուներին և գործողությունների պլանը: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի կենտրոնական ջեռուցման համակարգ, հակահրդեհային համակարգ, կրակմարիչներ, պահակակետ, տեղադրված են տեսանկարահանող սարքավորումներ, բոլոր հարկերում առկա են տարհանման պլաններ: Կաթսայատան շահագործումն ապահովելու համար պայմանագրային հիմունքներով քոլեջը համագործակցում է «ԷՅ-Ի-ՋԻ սերվիս» ՍՊԸ, «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի մասնագետներ հետ: Քոլեջն ունի բուժկետ, ուսանողներն ու դասախոսները ընդհանուր առմամբ գոհ են բուժկետի ծառայություններից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներ չունի: Շենքի մուտքային հատվածներում առկա են թեքահարթակներ, իսկ որպես ապաստարան հատկացված տարածքը բարվոք վիճակում չի գտնվում:

Քոլեջում գործում է «Ֆունկցիոնալ մարմիններից և ենթակառուցվածքային պայմաններից ուսանողների և աշխատակիցների բավարարվածության գնահատման» կանոնակարգը (2021թ.), որի համաձայն իրականացվել են ռեսուրսներից բավարարվածության հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում: Ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման հիմնական մեխանիզմը հարցումներն են, որոնք դեռևս հստակ պարբերականությամբ չեն իրականացվել, այդուհանդերձ հարցման արդյունքներով քոլեջը պլանավորում է իրականացնել բարելավումներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը ռեսուրսների արդիականացումը համարում է իր ռազմավարական առաջնահերթություններից մեկը, սահմանելով այդ ուղղությամբ նպատակներ: Ուսումնասիրությունները փաստում են, որ քոլեջի ենթակառուցվածքները շենքային պայմանները բարելավման կարիք ունեն, որը ներկա փուլում ֆինանսական մեծ բեռ է քոլեջի համար և պահանջում է լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավում՝ դրամաշնորհներ, ներդրումներ:

Միևնույն ժամանակ դրական է, որ քոլեջը իր ֆինանսական ռեսուրսների սահմաններում փորձում է բարելավել ուսումնական միջավայրը, համալրել նյութատեխնիկական բազան, սակայն հագեցվածությունը ըստ կրթական ծրագրերի ոչ համաչափ է ընթանում, ինչը հիմնականում պայմանավորված է կրթական ծրագրերում սովորող ուսանողների համակազմով, վերոնշյալը կարող է հանգեցնել առանձին կրթական ծրագրերի նկատմամբ հետաքրքրության նվազմանը, այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է ՄԿԾ-ների համար անհրաժեշտ ռեսուրսների հաշվառումը և նպատակային համալրումը: Կրթական միջավայրի շարունակական բարելավումը և տեխնիկական միջոցներով համալրումը կարևոր է ուսումնական միջավայրի արդիականացման համար, որը իր հերթին կնպաստի դիմորդների ներգրավմանը: Ուսանողակենտրոն միջավայրի ձևավորման համար նաև կարևոր է քոլեջի գրադարանային ֆոնդի շարունակական բարելավումը, էլեկտրոնային գրադարաններին անդամակցումը, բոլոր կրթական ծրագրերի համար մասնագիտական արդի գրականության ապահովումը:

Փորձագիտական խումբը ընդգծում է նաև, որ քոլեջը լիովին չի օգտագործում իր կրթական ծրագրերի համար ստեղծված ռեսուրսները, որը պայմանավորված է մի քանի մասնագիտություններով ուսանողների համալրման խնդիրների հետ: Հարկ է նշել, որ ուսանողների ներգրավման պարագայում առկա ռեսուրսների լիարժեք օգտագործումը ռազմավարական առաջնահերթություն կարող է հանդիսանալ ֆինանսական հնարավոր ներհոսքերի ապահովման տեսանկյունից: Մյուս կողմից դրական է, որ քոլեջը բացի ուսանողների վարձավճարներից ունի նաև այլընտրանքային ֆինանսական միջոցների ներգրավման հնարավորություններ, մասնավորապես դեղատնային կրպակի գործունեությունը, կարճատև ծրագրերի իրականացման հնարավորությունները: Ֆինանսական միջոցների համալրման և դիվերսիֆիկացիայի ուղղությամբ նպատակային քայլերը կարող են նպաստել քոլեջի ֆինանսական կայունության ապահովմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում գործընկերային ռեսուրսների համատեղ կիրառումը, որը նպաստում է ուսանողների մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորմանը, այդուհանդերձ այս մոտեցումները հիմնականում արտահայտվում են «Քույրական գործ» ՄԿԾ-ի համար, որը ընդգծվում է տեղի աշխատաշուկայում քոլեջի շրջանավարտների պահանջվածությամբ: Գործընկերային ռեսուրսների համատեղ օգտագործման դրական փորձի տարածումը մյուս կրթական ծրագրերում, կնպաստի քոլեջ-գործատու կապի ամրապնդմանը:

Դրական է, որ քոլեջը ապահովում է արտաքին հաղորդակցումը և հաշվետվողականությունը կիրառելով ժամանակակից ծրագրային ապահովման միջոցներ և հարթակներ, այդուհանդերձ փորձագիտական խումբը կարևորում է նաև ներքին փաստաթղթաշրջանառության միասնական համակարգի ներդնումը, որը կնպաստի և փաստաթղթաշրջանառության գործընթացների օպտիմալացմանը:

Դրական է, որ քոլեջը ապահովում է անվտանգային միջավայր, ինչպես նաև իրականացնում է ռեսուրսների հասանելիության և արդյունավետության գնահատում, որը կարող է հիմք հանդիսանալ առաջիկա բարելավումների համար, այդուհանդերձ հարցումների իրականացման մեթոդաբանությունը և արդյունավետություն նույնպես գնահատման կարիք ունեն, քոլեջին անհրաժեշտ են առավել խորքային վերլուծություններ, որոնք թույլ կտան վեր հանել

ռեսուրսների հասանելիության և արդյունավետ օգտագործման խնդիրները և այդ ուղղությամբ առաջադրել լուծումներ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ը կարողանում է ապահովել ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, որոշակիորեն առկա են կրթական ծրագրերի համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսները, պարբերաբար իրականացվում է անհրաժեշտ միջոցների համալրում, ֆինանսական միջոցները բաշխվում են ըստ սահմանված առաջնահերթությունների, ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում ՄԿԾ-ների իրականացման համար գործընկերային ռեսուրսների համատեղմամբ, ապահովված է ուսանողների համար անվտանգ միջավայր, որոշակիորեն գնահատվել են տրամադրվող ռեսուրսների բավարարվածությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Կապանի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ին գնահատում է բավարար:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ում գործում է հաշվետվողականության ներքևից վերև համակարգ, ստորաբաժանումներից դեպի տնօրինություն, տնօրինությունից դեպի համապատասխան պետական գերատեսչական մարմին, հաշվետվողականության մեխանիզմներ:

Քոլեջը ունի սահմանված հաշվետվողականության քաղաքականություն՝ «ԿՊԲՔ ՊՈԱԿ-ում իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման և շահակիցների առջև հաշետվողականության ապահովման», որտեղ ներկայացվում է ներքին և արտաքին հաշվետվողականության ընթացակարգը, հաշվետվողականության ժամանակացույցը ըստ հաշվետվողական օղակների: Կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ են ներկայացնում ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, ամբիոնների վարիչները, մեթոդիստը, որակի պատասխանատուն, կարիերայի ուղղորդման պատասխանատուն, դաստիարակչական գծով կազմակերպիչը, կադրերի տեսուչը, գրադարանավարը, ուսանողական խորհրդի նախագահը, տնտեսվարը, հաշվապահը: Հաշվետվություններ ներկայացվում են կիսամյակային և տարեկան կտրվածքով: Ստորաբաժանումները ներկայացնում են իրենց կատարած աշխատանքների հաշվետվությունը համապատասխան ղեկավարին: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ներկայացված հաշվետվությունները կրում են նկարագրական բնույթ իրականացված գործընթացների վերաբերյալ, օրինակ՝ մեթոդիստի, ամբիոնի վարիչի, որակի պատասխանատուի, պրակտիկայի ղեկավարի, կարիերայի ուղղորդման պատասխանատուի, դաստիարակչական գծով կազմակերպչի, գրադարանավարի, ուսանողական խորհրդի նախագահի հաշվետվությունները:

Քոլեջում գործում է «Ներքին հաշվետվողականության վերլուծման և գնահատման» քաղաքականություն, որը կանոնակարգում է հաշվետվողականության պարբերականությունը: Ստորաբաժանումների հաշվետվությունները քննարկվում են մանկավարժական խորհրդի նիստերում: Տնօրենը հաշվետու է կառավարման, մանկավարժական խորհուրդներին: Տնօրենի տարեկան հաշվետվությունը ներքին գնահատման տեղեկանք է, որը կազմվում է «Ներքին

գնահատման ընթացակարգի» (2021թ.) հիման վրա: Ներքին գնահատման տեղեկանքը կազմվում է քոլեջի բոլոր ստորաբաժանումների ընթացիկ և տարեկան հաշվետվությունների հիման վրա, արտացոլելով քոլեջի գործունեության բոլոր բնագավառներն ու հիմնախնդիրները: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տնօրենի հաշվետվությունները հիմնականում կենտրոնացած են կատարված գործողությունների նկարագրման վրա՝ վերլուծական հիմքերը թույլ են արտահայտված: Հաշվապահի կողմից ֆինանսական հաշվետվություններ են ներկայացվում կառավարման խորհրդին և լիազոր մարմնին:

Քոլեջն ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը ապահովում է որպես տեղեկատվական հարթակ օգտագործելով Ֆեյսբուք սոցիալական ցանցը: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ առկա է անընդհատ թարմացվող տեղեկատվություն քոլեջի գործընթացների վերաբերյալ: Ֆեյսբուքյան էջում պարբերաբար հրապարակվում են հայտարարություններ մասնագիտությունների և ընդունելության պայմանների, ընդունելության քննության, վարձավճարների վերաբերյալ: Ինչպես նաև լուսաբանվում է քոլեջի աշխատանքային գործունեությունը՝ միջոցառումները, բաց դասերը, գործատուների հետ հանդիպումները, ուսանողների և շրջանավարտների ձեռքբերումները, տրամադրվում է տեղեկատվություն թափուր աշխատատեղերի վերաբերյալ, սակայն հարկ է նշել, որ հարթակում չեն հրապարակվում քոլեջի գործունեությանը վերաբերող փաստաթղթեր: Քոլեջը ուսումնասիրել է ֆեսբուքյան էջի բովանդակության վերաբերյալ շահակիցների բավարարվածությունը՝ ըստ որի՝ շահակիցների 81,4%-ը բավարարված են քոլեջի ֆեյսբուքում տեղադրվող անհրաժեշտ տեղեկատվության հագեցվածությունից, 86,1% -ը՝ համարում են, որ թարմացումները լինում են ժամանակին, 79%-ը համարում է, որ էջը ակտիվ է: Նաև պարզ դարձավ, որ դեռևս նախապատրաստական փուլում է տեղեկատվության հասանելիությունն ու թափանցիկությունն ապահովող նոր հարթակի՝ պաշտոնական կայք էջի գործարկումը:

Հասարակության հետ հետադարձ կապի հաստատման միջոցների ուսումնասիրությունից և փորձագիտական այցի ընթացքում շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի ապահովման որոշ մեխանիզմներ: Հասարակության հետ հետադարձ կապ հաստատելու և հաշվետվողականություն ապահովող հիմնական միջոցներից է ֆեյսբուքյան էջը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կարիերայի ուղղորդման պատասխանատուն, ով միևնույն ժամանակ նաև համակարգում է ֆեսբուքյան էջի աշխատանքները, ապահովում է շահակիցների հարցերին արագ արձագանքումը: Հասարակության հետ հետադարձ կապը իրականացվում է բազմաբնույթ միջոցներով, ներառյալ գործատուների և շրջանավարտների հետ կազմակերպվող հանդիպումները, ծնողական ժողովները, տարբեր ձևաչափի շրջայցերը, ինչպես նաև տեղեկատվության տարածումը թերթերի, ամսագրերի և այլ զանգվածային լրատվամիջոցների միջոցով: Հարկ է նշել, որ հետադարձ կապի միջոցների արդյունավետության գնահատում չի իրականացվել:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի կողմից կազմակերպվում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցմանը միտված միջոցառումներ: Մասնավորապես՝ քոլեջի ուսանողները մասնակցել են Առողջապահության նախարարության կողմից կազմակերպված «Առողջ ապրելակերպը սովորություն է» արշավին, մասնակցել են նաև հակածխախոտային ակցիաներին՝ որի ընթացքում ուսանողները բնակիչների շրջանում տրվել են որոշակի խորհրդատվություններ, լուսաբանել ծխախոտի թողած վնասակար ազդեցությունը օրգանիզմի վրա: Կարիերայի պատասխանատուի մասնակցությամբ առաջին բուժօգնության դասընթացներ են անցկացնում տարածաշրջանի ուսումնական հաստատություններում, նախատեսված է նաև դասընթացը իրականացնել տարածաշրջանի զորամասերի զինվորների շրջանում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում մշակված է հաշվետվողականության քաղաքականություն, որը ներառում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հաշվետվողականության ընթացակարգեր, իսկ բոլոր ստորաբաժանումները ներկայացնում են մանրամասն հաշվետվություններ, նպաստելով աշխատանքի թափանցիկության ու արդյունավետության բարձրացմանը: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը մտահոգություն է հայտնում, որ հաշվետվությունների վերլուծական բաղադրիչը թույլ է արտահայտված և դրված չէ ինստիտուցիոնալ մակարդակում, ինչը կարող է խոչընդոտել աշխատանքների վերլուծության և գնահատման գործընթացների կատարելագործմանը, սահմանափակելով կառավարման կայունությունը և թափանցիկությունը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ապահովում է ակտիվ հաղորդակցություն հասարակության հետ Ֆեյսբուք սոցիալական ցանցի միջոցով, որտեղ պարբերաբար հրապարակվում են քոլեջի գործունեության վերաբերյալ կարևոր տեղեկություններ: Սա կարող է նպաստել հասարակության տեղեկացվածության բարձրացմանն ու վստահության ձևավորմանը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի նախաձեռնությունը՝ նոր պաշտոնական կայքէջի նախապատրաստումը, ինչը կարող է լրացուցիչ հնարավորություն ստեղծել հասարակության հետ արդյունավետ հաղորդակցության զարգացման համար՝ ապահովելով փաստաթղթային հենքի հասանելիությունը և թափանցիկությունը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը կազմակերպում է հասարակությանը գիտելիքների փոխանցման միջոցառումներ, ինչը կարող է նպաստել հասարակության հետ փոխադարձ կապի ամրապնդմանը և քոլեջի սոցիալական դերակատարության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով որ ՄՈՒՀ-ը ունի հաշվետվողականության սահմանված կարգ, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը ապահովում է սոցիալական էջի միջոցով, որոշակիորեն գործում է հասարակության հետ հետադարձ կապի մեխանիզմներ, իրականացվում է հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման միջոցառումներ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը **բավարարում է** չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Կապանի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ը գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

Կապանի պետական բժշկական քոլեջը արտաքին կապեր և միջազգայնացում ուղղությամբ ռազմավարական ծրագրում սահմանել է՝ բազմազանեցնել և ընդլայնել քոլեջի շարունակական ակտիվ մասնակցությունը միջին մասնագիտական կրթության միջազգային տարածքների ինտեգրման գործընթացներին և միջազգային քոլեջներ ցանցերին: Նպատակին հասնելու համար որպես խնդիր դիտարկվել է համագործակցություն հաստատել մասնագիտական կրթական միջազգային կառույցների, հասարակական կազմակերպությունների, հաստատությունների հետ: Միջազգայնացման ուղղությամբ քոլեջը 2023թ.-ին մշակել է հետևյալ կանոնակարգող

փաստաթղթերը՝ «ԿՊԲՔ ՊՈԱԿ-ում միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն և ընթացակարգեր», «ԿՊԲՔ ՊՈԱԿ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ընթացակարգ», «ԿՊԲՔ ՊՈԱԿ-ի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների արդյունավետության գնահատման ընթացակարգ»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում ստեղծվել է արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառույց, որը ներկայումս նախագահում է քոլեջի կազմակերպիչը (կազմակերպում է սովորողների դաստիարակչական և արտաքոլեջային աշխատանքները՝ համագործակցելով կուրսղեկների հետ), որին անդամակցում են՝ ուսումնական գծով փոխտնօրենը և կարիերայի պատասխանատուն: Այդուհանդերձ, արտաքին կապերի հիմնական համակարգողը քոլեջի կարիերայի պատասխանատուն է, որը զբաղվում է հետևյալ աշխատանքներով՝ պայմանագրերի, պրակտիկայի վայրերի և այլ կազմակերպությունների հետ համագործակցության հուշագրերի կնքում և գործատուների հետ կապերի հաստատում: Քոլեջի տնօրենը նույնպես աջակցում է համագործակցության շրջանակների ձևավորմանը՝ խթանելով նոր նախաձեռնություններ:

Ինքնավերլուծությունից և փորձագիտական խմբի հանդիպումներից պարզվեց որ Քոլեջը համագործակցում է 8 տեղական և 3 միջազգային գործընկերների հետ: Քոլեջը պայմանագրերի և համաձայնագրերի շրջանակներում համագործակցում է տարբեր մասնագիտություններով ուսումնական պարապմունքների և պրակտիկաների համար՝ «Քույրական գոր» և «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտությունների համար «Կապանի բժշկական կենտրոն»-ի (2023), «Անվիտա ՍՊԸ»-ի (2023), «Դեղագործություն» մասնագիտության պրակտիկայի համար՝ «Կարեն Դավթյան Արայի» (2022), «Սոցիալական աշխատանք» մասնագիտության պրակտիկայի համար՝ «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն»-ի (2022), «Հայաստանի ազգային արխիվ»-ի (2022), «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության պրակտիկայի համար՝ «ՏԻՐՆԻՔ»-ի ՍՊԸ (2021), «Ա/Ձ Շահեն Ալեքսանյան»(2021) «ՀԿԽԸ Սյունիքի մարզային մասնաճյուղ»-ի հետ: Վերոնշյալ կազմակերպությունները նաև աշխատանքի վայր են հանդիսանում քոլեջի շրջանավարտների համար: ՄՈՒՀ-ի դիտարկմամբ իր ամենախոշոր գործատու-գործընկերներից են Կապանի բժշկական կենտրոնը, «Deno Gold Mining Company» և «Անվիտա» ՍՊԸ:

«Ֆրանս-հայկական ուսումնական կենտրոն»-ի (2023) և «Ռոնի մասնագիտական ուսուցման ընկերության» հետ համագործակցության արդյունքում քոլեջը նախատեսում է համալիր համագործակցություն, ինչպես կրթական ծրագրերի փոխադարձ համահնչեցման, սեմինարների դասընթացների կազմակերպման այնպես էլ ՄՈՒՀ-ի առաջարկությամբ սիմուլյացիոն կենտրոնի ստեղծման համար, որը քոլեջի ներքին և արտաքին շահակիցների դիտարկմամբ կարևոր քայլ կլինի ինչպես քոլեջի կրթական ծրագրերի իրականացման, այնպես էլ ընդհանրապես բժշկական ոլորտի համար: Հարկ է նշել, որ գործընթացների իրականացման համար հստակ ժամանակացույց նախատեսված չէ:

ՄՈՒՀ-ը նաև ծառայություն է մատուցում իր գործատու գործընկերներին իրականացնելով վճարովի վերապատրաստման և ուսուցման ծրագրեր: Մասնավորապես՝ աշխատողների անվտանգության ապահովման և դժբախտ պատահարների աճից խուսափելու նպատակով իրականացվել է «Deno Gold Mining Company» ՓԲԸ բուժաշխատողների և փրկարարների վերապատրաստման լրացուցիչ կրթական ծրագիրը՝ «Անհետաձգելի բուժօգնության ցուցաբերում»:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը համագործակցում է Գորիսի պետական քոլեջի, Ուրարտու համալսարանի, Եվրասիա միջազգային համալսարանի և Երևանի պետական համալսարանի հետ: Բուհերի հետ համագործակցությունը հիմնականում ծավալվում է շարունակական կրթության շրջանակներում: Միևնույն ժամանակ, Գորիսի պետական քոլեջի հետ համագործակցությունը ներառում է դասախոսների վերապատրաստման, առաջավոր փորձի փոխանակման և մասնագիտական զարգացման այլ նախաձեռնություններ, որը թեև դեռևս պլանավորման փուլում է:

ՄՈՒՀ-ն ունի որոշակի փորձառություն միջազգայնացման գործընթացում՝ մասնավորապես մասնակցելով Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Էրազմուս+» ծրագրին: Ներկայումս ՄՈՒՀ-ը ակտիվ քայլեր է ձեռնարկում «Էրազմուս+» ծրագրերին մասնակցելու ուղղությամբ, այդ թվում՝ «ERASMUS-EDU-2023-CB-VET» և «IMPROVET» ծրագրերի շրջանակներում (2024թ.)՝ «Սոցիալական ձեռնարկատիրություն» թեմայով: Հայաստանից ընդգրկված երեք քոլեջներից մեկը ԿՊԲՔ-ն է: Այս ծրագրերը համակարգվում են քոլեջի կարիերայի պատասխանատուի կողմից, որը մշակում է ծրագրերի կազմակերպման և իրականացման մարտավարությունը:

Իսկ ինչ վերաբերում է ներքին շահակիցների օտար լեզուների տիրապետմանը, ապա ըստ ինքնավերլուծության տվյալների՝ անձնակազմի 29,28%-ը տիրապետում է անգլերենին, իսկ 41,25%-ը՝ ռուսերենին: Ուսանողների 100%-ը տիրապետում է ռուսերենին և 37%-ը՝ անգլերենին: Քոլեջում օտար լեզուների իմացության վերաբերյալ ներկայացված տվյալները սուբյեկտիվ բնույթ ունեն (հիմնված են շահակիցների լեզվի իմացության ինքնագնահատման վրա), քանի որ լեզվաբանական թեստավորում չի իրականացվել: Քոլեջը քայլեր է ձեռնարկում անձնակազմի օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ՝ նախատեսվում են լրացուցիչ դասընթացներ՝ ռուսերեն և անգլերեն լեզուների համար: Ինչպես նաև, որպես նախասիրական առարկա նախատեսվում է ֆրանսերեն լեզվի ուսուցումը (պայմանավորված ֆրանսիական կողմի հետ համագործակցության հեռանկարային ակնկալիքներով):

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Կապանի պետական բժշկական քոլեջը ռազմավարական ծրագրում սահմանել է արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ բազմազանեցման և ընդլայնման նպատակ, ինչը կարող է նպաստել քոլեջի շարունակական մասնակցությանը միջին մասնագիտական կրթության միջազգային տարածքների ինտեգրման գործընթացներին և միջազգային համագործակցության ընդլայնմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում մշակվել են միջազգայնացմանը նպաստող քաղաքականության և ընթացակարգերի վերաբերյալ փաստաթղթեր, ինչը կարող է նպաստել քոլեջի գործունեության կազմակերպման և զարգացման հստակ և կարգավորված համակարգի ձևավորմանը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի ներքին ենթակառուցվածքներում արտաքին կապերը ապահովող օղակի դերի և պատասխանատվության հստակեցման անհրաժեշտություն կա, հաշվի առնելով, որ համակարգման դերը կիսում են ինչպես կազմակերպիչը, այնպես էլ կարիերայի պատասխանատուն, սակայն գործառույթների հստակ բաշխում և պատասխանատվությունների շրջանակ առանձնացված չէ, որը կարող է անդրադառնալ գործընթացների արդյունավետության վրա: Փաստաթղթային հենքի և գործընթացների պատասխանատուների գործառույթների համապատասխանեցումը կնպաստի արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացների արդյունավետության բարձրացմանը, գործընկերների հետ փոխգործակցության կազմակերպման որակի բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը համագործակցում է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային գործընկերների հետ, ինչը կարող է նպաստել ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը և շրջանավարտների զբաղվածության հնարավորությունների ընդլայնմանը: Այնուամենայնիվ, քոլեջի ներքին շահակիցների օտար լեզվի իմացության ցածր մակարդակը կարող է սահմանափակել քոլեջի միջազգայնացման ծրագրերի արդյունավետությունը: Մյուս կողմից առկա է օտար լեզուների իմացության վերաբերյալ տվյալների բացակայություն լեզվաբանական մակարդակի հստակ գնահատումը և համապատասխան միջոցառումների իրականացումը կարող են նպաստել ինչպես միջազգայնացման, այնպես էլ ներքին շահակիցների մասնագիտական կարողությունների զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Կապանի պետական բժշկական քոլեջում միջազգայնացումն ու արտաքին կապերը հանդիսանում են ՄՈՒՀ-ի ռազմավարական ուղղություններ, սահմանվել են նպատակներ և խնդիրներ, ընդլայնվել է համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների ու կառույցների հետ, ինչպես նաև ստեղծվել է ենթակառուցվածք գործընթացների կանոնակարգման համար, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 9-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքները մեկնարկել են 2018 թ.-ից: Քոլեջը որակի ապահովման աշխատանքների իրականացման համար ընտրել է կոլեգիալ մարմին ստեղծելու մոդելը, ըստ այդմ ձևավորվել է Ներքին որակի ապահովման ենթակառույցը (այսուհետ ՈԱ ենթակառույց): 2020թ. Ներքին որակի ապահովման ենթակառույցի նախագահին հատկացվել է 0,25 դրույքչափ, որպես «կրթության որակի պատասխանատու», ենթակառույցը ձևավորվել է հետևյալ կազմով՝ ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, կարիերայի պատասխանատու, 2 ամբիոնի վարիչներ, 3 դասախոսներ, ՈՒԽ նախագահ և 3 անդամներ (2024-2025 ուստարվա տվյալներով): Երթակառույցի անդամները ներգրավված են հասարակական հիմունքներով: 2024թ.-ից կրթության որակի պատասխանատուին հատկացվել է 0.5 դրույքաչափ:

Քոլեջում որակի ապահովումը չի հանդիսանում առանձին ռազմավարական նպատակ, սակայն ներառված է «Կրթական գործունեություն ուղղության» խնդիրներում, օրինակ՝ խնդիր 2.10 «նախապատրաստել քոլեջի հավատարմագրման փաթեթը և կազմակերպել հավատարմագրման գործընթացի նախապատրաստումը քոլեջում», որտեղ նախատեսվում է իրականացնել տարբեր հարցումներ շահակիցների շրջանում, մշակել որակի ապահովման փաստաթղթային հենքը և այլն:

Որակի մշակույթի ձևավորման և գործընթացների կանոնակարգման նպատակով քոլեջը փորձել է ձևավորել համապատասխան փաստաթղթային բազա: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս նպատակով քոլեջի Ներքին որակի ապահովման ենթակառույցի կողմից մշակվել է «Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր» փաստաթուղթը, որը սահմանում է որակի ապահովման կրթական ծրագրերի որակի հսկողության, շարունակական բարելավման և հավատարմագրման գործընթացների իրականացման մեխանիզմները: Քաղաքականության համաձայն՝ ՈԱ համակարգի առաքելությունն է կրթական չափորոշիչների պահպանման, ծրագրերի որակի ապահովման և բարելավման աշխատանքներին աջակցելը՝ ստեղծելով պայմաններ որակի գնահատման և հավատարմագրման իրականացման համար:

Կրթության որակի ներքին ապահովման նպատակով քոլեջում մշակվել են մի շարք կարգավորող փաստաթղթեր. 2019 թվականին մշակվել է «Որակի ներքին ապահովման» կարգը,

2020 թվականին՝ «Կրթության որակի պատասխանատուի» պաշտոնի անձնագիրը, իսկ 2021 թվականին՝ «Կրթության որակի պատասխանատուի կարգը», որը սահմանում է տվյալ պաշտոնի աշխատանքային գործառույթները: Վերջինս ներառում է կրթության որակի ապահովմանն ուղղված բազմաբնույթ աշխատանքների իրականացում, այդ թվում՝ ՄԿԾ-ների համապատասխանության գնահատում և վերահսկում չափանիշներին համապատասխանությունը, հարցումների կազմակերպում և համակարգում, ստորաբաժանումների որակի ապահովման գործընթացների համակարգում, ինչպես նաև միջազգային համագործակցության աջակցում և այլ գործառույթներ:

Համաձայն ՈԱ ենթակառույցի կանոնակարգի և քոլեջի հաշվետվողականության կարգի՝ ենթակառույցը հաշվետու է մանկավարժական խորհրդի առաջ: Քոլեջի կազմակերպական կառուցվածքի, խորհուրդների, հանձնաժողովների և ենթակառույցների սխեմատիկ կառուցվածքի և ներքին փոխկապվածության և հաշվետվողականության կառուցվածքների համեմատության արդյունքում պարզ է դառնում, որ կրթության որակի պատասխանատուն հաշվետու է տնօրենին, ենթակառույցը՝ տնօրենական խորհրդին, բոլոր դեպքերում ապահովված չէ ենթակառույցի և կրթության որակի պատասխանատուի աշխատանքների անկախությունը: Կրթության որակի պատասխանատուն միաժամանակ հանդիսանում է քոլեջի մեթոդիստը և ամբիոնի վարիչ, նաև դասավանդում է և ստանձնում է կուրսղեկի պարտականություններ:

Որակի ապահովման ենթակառույցի պատասխանատուի տարեկան պլանի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՈԱ աշխատանքները հիմնականում կենտրոնանում են ուսումնական պլանների վերանայման, դասավանդման և ուսումնառության մեթոդների գնահատման, կրթական ծրագրերի կատարման մշտադիտարկման և ուսանողների առաջադիմության վերլուծության վրա: Նախատեսված են նաև գործողություններ, ինչպես հարցումների անցկացում, մոդուլային ծրագրերի գնահատում, որոնց իրականացման համար գործիքակազմ, ռեսուրսներ և պատասխանատվությունների բաշխում ըստ ստորաբաժանումների նախատեսված չէ: Կրթության որակի պատասխանատուի հաշվետվության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն հիմնականում ներկայացնում է աշխատանքային պլանի կատարողականը՝ նշելով «կատարված է» կամ համարժեք մեկնաբանություններ: Որոշ դեպքերում, երբ անհրաժեշտ է դիտարկել գործընթացների, օրինակ՝ հարցումների արդյունքների, վերլուծությունը, հաշվետվությունում կատարվում է հղում այլ ստորաբաժանումների հաշվետվություններին, օրինակ՝ կարիերայի կենտրոնի:

Քոլեջը տարբեր ուղղություններով իրականացնում է հարցումներ՝ ներառյալ ուսանողների շրջանում «դասախոսների գործունեության գնահատման», «ենթակառուցվածքներից և ֆունկցիոնալ մարմիններից բավարարվածության գնահատման», «պրակտիկայի արդյունավետության և որակի գնահատման», «ուսանողների իրավական ակտերի վերաբերյալ իրազեկվածության գնահատման», «քոլեջի օժանդակ ծառայությունների խորհրդատվությունների բավարարվածության գնահատման», «ուսանողների բաց դասից բավարարվածության և որակի գնահատման» հարցումներ, «սոցիալական հարթակների բովանդակության և հետադարձ կապի արդյունավետության վերաբերյալ շահակիցների բավարարվածության գնահատման»: Բացի այդ, հարցումներ իրականացվում են շրջանավարտների շրջանում՝ ստացված կրթությունից գոհունակության, գործատուների շրջանում՝ պրակտիկայի և շրջանավարտներից գոհունակության, աշխատաշուկայի կարիքների վերհանման և գնահատման հետազոտության, ինչպես նաև դպրոցներում՝ «մասնագիտական կողմնորոշման արդյունավետության և որակի գնահատման» վերաբերյալ, առաջին կուրսեցիների շրջանում և այլն: Վերոնշյալ հարցումների իրականացման համար մշակված են համապատասխան հարցումների անցկացման կանոնակարգեր:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցումները հիմնականում անցկացվում են քոլեջի որակի պատասխանատուի և կարիերայի ուղղորդման պատասխանատուի կողմից: Հարցումները կազմակերպվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային ձևաչափով:

Հարցումների արդյունքները հիմնականում ենթարկվում են քանակական վերլուծության, երբեմն որոշ հարցումներին կից տեսանելի է նաև որակական գնահատական կամ բարելավման առաջարկներ: Քոլեջի կողմից հստակեցված են հարցումների նպատակները, սակայն ներկայացվող հարցումների արդյունքները հիմնականում մշակված են առանց անհրաժեշտ տվյալների՝ արձանագրված չէ իրականացման տարեթիվը, մասնակիցների քանակակազմը, ում կողմից է իրականացվել հարցումը՝ պատասխանատու ստորաբաժանումը: Ուսումնասիրությունները փաստում են, որ անցկացված հարցումները հիմնականում պարբերականություն չունեն (բացառությամբ դասախոսների գնահատման, որը իրականացվել է պարբերաբար), ինչպես նաև առկա չեն նախորդ տարիների հարցումների վերաբերյալ տվյալներ և համեմատական վերլուծություններ:

Հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում ներառված հարցերը բավական ընդհանրական են, հիմնականում փակ պատասխաններ արտահայտված գոհունակության սանդղակով, երբեմն կիրառվում են բաց հարցադրումներ: Համադրելով քոլեջի կողմից իրականացվող հարցումները որակի քաղաքականությամբ սահմանված նպատակներին՝ կարելի է նշել, որ դրանք որոշ չափով փոխկապակցված են: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կիրառվող հարցաշարերում բովանդակային փոփոխություններ չեն իրականացվել:

Ներքին գնահատման հարցումների արդյունքներն ու հաշվետվությունները յուրաքանչյուր կիսամյակի ավարտին ներկայացվում են քոլեջի տնօրենին: Հարցումների արդյունքում վեր հանված խնդիրներին քոլեջը փորձում է ընթացս լուծումներ տալ: Հարցումների արդյունքները որոշ դեպքերում բարելավման հիմք են հանդիսացել, ինչպես օրինակ՝ գնահատման գործընթացում և մեծ կշիռ է տրվել գործնական կարողությունների ստուգմանը, ռեսուրսների ուղղությամբ՝ ձեռք են բերվել համակարգիչներ, մուլյաժներ, վերանայվել են ուսումնառության նյութերը, գրադարանը համալրվել է որոշ մասնագիտական գրականությամբ և այլն: Այդուհանդերձ որակի ապահովման պատասխանատուի կողմից հարցումների արդյունավետությունը դեռևս չի գնահատվել: Հարցումներից բացի շահակիցների կարիքների վեր հանման և գնահատման այլ մեխանիզմներ չեն կիրառվում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի Որակի ապահովման պատասխանատուի կողմից կազմակերպվել և համակարգվել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացը: Անդրադառնալով քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությանը՝ որակի արտաքին գնահատման գործընթացների իրականացման համար, կարելի է նշել, որ փաստաթղթում հիմնականում կցվել են անհրաժեշտ հիմքերը, ներկայացվել իրականացված վերլուծությունների արդյունքները, այդուհանդերձ հաճախ նկատելի է չափանիշից և չափորոշիչներից շեղում, տեղեկատվության թերի կամ այլ չափանիշի ներքո ներկայացում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ կազմված ինքնավերլուծությունը, չի տարածվել շահակիցների ամբողջական շրջանակում, իսկ գործատուների և ներքին շահակիցների կարիքները ամբողջությամբ արտացոլված չեն ինքնավերլուծությունում, ինչպես նաև տեսանելի չէ նրանց մասնակցությունը ԻՎ աշխատանքներում:

2022թ. քոլեջը ներդրել է «Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման» քաղաքականությունը, որի շրջանակում սահմանվել են սկզբունքները, նպատակները և խնդիրները, վերանայման ընթացակարգը, հիմքերը, գործիքները և մեխանիզմները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2023 թվականի ընթացքում որակի ենթակառույցի կողմից վերանայվել և ներդրվել են մի շարք կանոնակարգեր, կազմվել է աշխատանքային պլանների ձևաչափը, ստեղծվել է նիստերի օրացուցային պլան: Վերոնշյալ օրինակները փաստում են հատվածային բարելավումների մասին, որը սակայն չի կրում ինստիտուցիոնալ բնույթ, ինչպես նաև որակի ներքին ապահովման համակարգի արդյունավետության գնահատում և վերանայում քոլեջը չի իրականացրել: Որակի ներքին

ապահովման ենթակառույցն ու նրա անդամները, իրենց աշխատանքային գործառույթների համադրությամբ, միաժամանակ հանդես են գալիս որպես գնահատողներ և գնահատվողներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը 2018 թվականից ներդրել է որակի ապահովման համակարգը՝ ստեղծելով ներքին ենթակառուցվածք և սահմանելով կարգավորող փաստաթղթեր: Սակայն որակի պատասխանատուն համատեղում է մի շարք պարտականություններ, իսկ որակի ենթակառույցի կազմում ներգրավված են կառավարման այլ օղակների ղեկավարներ, ինչը նվազեցնում է դրա անկախությունը: Արդյունքում, որակի ապահովման աշխատանքները հիմնականում սահմանափակվում են կրթական գործընթացների գնահատմամբ և չեն նպաստում տվյալահենք կառավարման զարգացմանը:

Քոլեջը պարբերաբար իրականացնում է շահակիցների հարցումներ՝ կրթական գործընթացների արդյունավետության գնահատման ուղղությամբ, սակայն դրանց բովանդակությունը հիմնականում ընդհանրական է, ինչը սահմանափակում է օբյեկտիվ տվյալների հավաքագրումը: Որակի ապահովման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է կիրառել հստակ մեթոդաբանություն, ներառելով հետազոտության ժամկետների, ընտրված խմբերի և վերլուծական մոտեցումների հստակեցում:

Փորձագիտական խումբը կարևորում է հավաքագրված տվյալների վերլուծության մեթոդաբանական ամբողջականությունը՝ ներառելով չափելի ցուցանիշների կիրառություն, հետազոտական մոտեցումների հստակեցում և տվյալների համադրելիության ապահովում: Հարցումների պարբերական կազմակերպումը, մեթոդաբանական արդիականացումը և տարբեր տարիների արդյունքների համեմատական վերլուծությունը հնարավորություն կտա քոլեջին գնահատել արձանագրված առաջընթացը, բացահայտել հնարավոր մարտահրավերները և հիմնավորել տվյալահենք որոշումների կայացման գործընթացը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը համակարգել է ինքնավերլուծության գործընթացը և ներկայացրել որոշակի հիմքեր ու վերլուծությունների արդյունքներ: Փորձագիտական խումբը կարևորում է ինքնավերլուծության աշխատանքներում շահակիցների լիարժեք ընդգրկումը, ստորաբաժանումների պատասխանատվությունների հստակ բաշխումը, տվյալների հավաքագրման և վերլուծության միասնական մոտեցումների ձևավորումը, որը կնպաստի ինքնավերլուծության մշակույթի ձևավորմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ 2022 թվականին քոլեջը ներդրել է «Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման» քաղաքականությունը, որը սահմանում է սկզբունքներ, նպատակներ և մեխանիզմներ: Սա կարևոր նախաձեռնություն է որակի գործընթացների կանոնակարգման ուղղությամբ: Այնուամենայնիվ, խումբը գտնում է, որ որակի ապահովման համակարգը հաճախ կենտրոնանում է կրթության իրականացման վերահսկողության գործառույթների վրա, ինչը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ կրթության որակի պատասխանատուի պաշտոնի անձնագրերում սահմանված են վերահսկողական գործառույթներ: Հարկ է նշել, որ որակի ապահովման մեխանիզմները դեռևս ներդրման փուլում են և վերանայման աշխատանքները հիմնականում կրում են հատվածային բնույթ, ըստ այդմ որակի ապահովման համակարգի արդյունավետության ու վերանայման ինստիտուցիոնալ մակարդակը դեռևս լիարժեք ձևավորված չէ: Թեև քոլեջը իրականացնում տարբեր գործընթացների գնահատում, սակայն կիրառվող գործիքակազմի (օրինակ հարցումներ, դասալսումներ և այլն) արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ ներդրված չեն, ինչը խոչընդոտում է համակարգի շարունակական բարելավմանը և ՊԻԳԲ շրջափուլի ինստիտուցիոնալ կիրառությանը: Վերանայման մեխանիզմների ամբողջական կիրառությունը և ներառումը ինստիտուցիոնալ մակարդակում, շահակիցների ներգրավումը և որակի գնահատման ու բարելավման գործընթացներում, կարող է նպաստել որակի ապահովման համակարգի արդյունավետության բարձրացմանը, որակի մշակույթի ամրապնդմանը և գործընթացների շարունակական զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Որակի ներքին ապահովման համակարգի զարգացումը և որակի մշակույթի տարածումը ՄՈՒՀ-ի ռազմավարական պլանավորման նպատակ չեն հանդիսանում, ինչպես նաև այն փաստը, որ Որակի ներքին ապահովման ենթակառուցվածքը չունի լիակատար անկախություն, որակի ապահովման պատասխանատուն միաժամանակ կատարողի և գնահատողի դերում է, համակարգը դեռևս չի ենթարկվել ամբողջական վերանայման, ապահովված չէ ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվության թափանցիկությունը ներքին և արտաքին շահակիցների համար, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 10-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Փորձագիտական խմբի ղեկավար
Ասյա Սիմոնյան

17 մարտի, 2025թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

1. **Ասյա Սիմոնյան՝** 2013թ-ին ավարտել է Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի «ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտության մագիստրոսական ծրագիրը: 2017թ.-ին ավարտել է ՇՊՀ «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ֆիզիկական կուլտուրա)» մասնագիտության ասպիրանտուրան: Մանկավարժական գիտությունների թեկնածու է: 2005-2007թթ. աշխատել է «Գյումրու մարմնամարզիկ» ՓԲԸ-ում՝ որպես գեղարվեստական մարմնամարզության մարզիչ, 2007-ից աշխատում է Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցում, որպես մարզիչ-մանկավարժ, 2013-ից մինչ օրս աշխատում է Շիրակի պետական համալսարանում՝ ներկայումս Սպորտի և արվեստի ամբիոնի ասիստենտ է: 2017 թվականից հանդիսանում է գեղարվեստական մարմնամարզության անհատական և խմբակային ձևերի միջազգային կարգի մրցավար: 2021թ-ից անդամակցում է ՀՀ մարմնամարզության ֆեդերացիայի գեղարվեստական մարմնամարզության մրցավարական խորհրդին: Հրատարակել է 13 գիտական հոդվածներ հանրապետական և միջազգային նշանակության պարբերականներում: 2004թ. -ին ստացել է ՀՀ գեղարվեստական մարմնամարզության սպորտի վարպետի կոչում: Գեղարվեստական մարմնամարզության հանրապետական և միջազգային առաջնությունների բազմակի հաղթող և մրցանակակիր է: 2008թ. Աշխարհի գավաթի, 2010թ. Աշխարհի առաջնության և 2012թ. Աշխարհի ակումբային առաջնության մասնակից է: 2013թ. -ին Մագիստրոսի կրթական ծրագրով ճանաչվել է հանրապետական «Լավագույն ուսանող» մրցույթի մրցանակակիր (սպորտի ոլորտում): 2015թ. ստացել է «Պատվոգիր» ՀԱՕԿ-ի կողմից՝ ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառում ունեցած մեծ ավանդի, գեղարվեստական մարմնամարզությունը և օլիմպիական գաղափարախոսությունը մասսայականացնելու համար:
2. **Լուսինե Մանուչարյան՝** 1995 թվականին ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը՝ ստանալով բակալավրի աստիճան կենսաբանություն մասնագիտությամբ: Աշխատանքային գործունեությունն սկսել է 2006 թվականին՝ ԵՀԲՔ-ում որպես կենսաբանության դասախոս: 2014 թվականից զբաղեցրել է մեթոդիստի պաշտոնը, իսկ 2019 թվականից հանդիսանում է մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման պատասխանատու:
3. **Ռուզաննա Խուրշուդյան՝** 1997 թվականին ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը՝ ստանալով բակալավրի աստիճան դեղագիտության մասնագիտությամբ: Իր մասնագիտական գործունեությունը սկսել է 1997 թվականին՝ աշխատելով Ճերմակ հիվանդանոցում որպես դեղագետ, որտեղ ներգրավված է եղել ներհիվանդանոցային դեղերի հաշվառման և բաշխման գործընթացներում: 2005 թվականից մինչ օրս դասավանդում է Գյումրու պետական բժշկական քոլեջում, իսկ 2011 թվականից՝ Շիրակի պետական համալսարանում՝ մասնագիտանալով դեղաբանության և ֆարմակոգնոզիայի դասավանդման ոլորտում:
4. **Ալլա Նիկողոսյանը՝** 2021 թվականից սովորում է Արարատի տարածաշրջանային պետական քոլեջում՝ դեղագործության մասնագիտությամբ: 2024 թվականին մասնակցել է ՈԱԱԿ-ի ուսանող-փորձագետի վերապատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N.	27.10.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Ռեսուրսների դիտարկում	16:30	17:40	70 րոպե

N.	28.10.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում տնօրենի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում տնօրենի տեղակալների և ուս.մասի քարտուղարի հետ	10:30	11:30	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած խմբի անդամների հետ	11:40	12:20	40 րոպե
4.	Դասալսումներ	12:30	13:10	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
6.	Հանդիպում շրջանավարտների հետ	14:30	15:20	50 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	15:30	16:20	50 րոպե
8.	Հանդիպում Կոլեգիալ կառավարման խորհրդի անդամների հետ	16:30	17:20	50 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	18:30	60 րոպե

N.	29.10.2023 թ.		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ		09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 ներկայացուցիչ) հետ		10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ		11:50	12:40	50 րոպե
4.	Հանդիպում ՈւԽ ներկայացուցիչների հետ		12:50	13:30	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ		13:40	14:40	60 րոպե
6.	Զուգահեռ հանդիպում «Քույրական գործ»,«Դեղագործություն», «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ		14:50	15:40	50 րոպե
7.	Զուգահեռ հանդիպում «Քույրական գործ» և «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտության կրթական ծրագրերի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Դեղագործություն» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	15:50	16:40	50 րոպե
8.	Զուգահեռ հանդիպում «Քույրական գործ» և «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտության կրթական ծրագրերի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Դեղագործություն» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	16:50	17:40	50 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում		17:50	18:30	40 րոպե

N.	30.10.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (Կարիերայի ուղղ. պատասխանատու, Պրակտիկայի ղեկավար, Գրադարանավար, Հաշվապահ, Կադրերի բաժնի տեսուչ, Արխիվավար, Մեթոդիստ, Դեղ. կրպակի աշխատող) ղեկավարների հետ	09:00	10:10	70 րոպե
2.	Հանդիպում Կրթության որակի պատասխանատուի հետ	10:20	11:20	60 րոպե
3.	Բաց հանդիպում	11:30	12:10	40 րոպե
4.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	12:20	13:00	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:10	15:30	80 րոպե
7.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	15:30	15:50	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Ներքին գնահատման արդյունքները, 2021, 2022, 2023 թ.-ի համար (հավելված 1.19)	1
2.	Կատարողական ՌԾ 2017-2022	1
3.	«Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ- ի կառավարման ուղեցույց	2
4.	Հավելված 3.4 Մասնագրեր (3 ՄԿԾ)	2
5.	Բոլոր ստորաբաժանումների վերջին հինգ տարիների աշխատանքային պլանները	2
6.	Տնօրենի տարեկան հաշվետվությունները (2023-2024թթ.)	2
7.	Բոլոր ստորաբաժանումների վերջին հաշվետվությունները (2023-2024 թթ.)	2
8.	ԿԳՄՄՆ ուղարկված գրություն	2
9.	Բոլոր խորհուրդների կազմը	2
10.	Ամբիոնի նիստերի արձանագրություններ	2
11.	Խորհուրդների նիստերի արձանագրություններ	2
12.	Պետական ամփոփիչ ատեստավորման քննության նախագահների հաշվետվություններ	2
13.	Կառավարման և վարչատնտեսական աշխաատանքների բարելավման հարցումներ	2
14.	Կապանի պետական բժշկական քոլեջի կառավարչական, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման աշխատանքների համալիր պլան / Հավելված 4.3 /	2
15.	Դասախոսների փաթեթներ (3 ՄԿԾ-ների)	3
16.	Պրակտիկայի ժամանակացույց	
17.	Պրակտիկայի լրացված օրագրեր (3 ՄԿԾ-ների)	3
18.	Հավելված 3.32 Օտարերկրյա քաղաքացիների ընդունելության գիտելիքների ստուգման կարգ	3
19.	Հավելված 3.5 Մոդուլային ուս. ծրագրեր	3
20.	Հավելված 1.4 Լիցենզիաներ	3
21.	Գործատուների առաջարկությունները /առկայության դեպքում/	3
22.	Հավելված 2.13 Ամբիոնի կանոնակարգ	3
23.	Հավելված 3.5 Կառավարման խորհրդի նիստերի արձանագրություններ	3
24.	Հավելված 1.12 շրջանավարտների մասին գործատուների կողմից տեղեկատվության վերլուծություն և գործատուների հարցաթերթեր	4
25.	Խորհրդատվությունների ժամանակացույց	4
26.	Ուսանողների թիվ	4
27.	2024-2025 թթ. ընդունված ուսանողների թիվը ըստ մասնագիտությունների	4
28.	ՈՒԽ նախագահի աշխատանքային պլանը	4
29.	Ուխ անդամների ցանկ	4
30.	ՈՒԽ նիստերի արձանագրությունները	4
31.	ՈՒԽ -ի կատարած աշխատանքների պլան (2023-2024 թթ.)	4
32.	Հավելված 4.3 Մասնագիտական կողմնորոշման նիստ	4
33.	Մասնագիտական կողմնորոշման հանձնաժողովների կազմը և ցանկը ըստ տարիների	4
34.	Դասալսման մատյան	5
35.	Դասալսման ձևաթղթի օրինակ	5

36.	Դասալսումների ժամանակացույց /Առկայության դեպքում/	5
37.	Շրջանավարտ-դասախոսների ցանկ	5
38.	Ֆինանսների տնօրինման քաղաքականություն և ընթացակարգ»-ը, Հավելված 7.3	7
39.	«Ռեսուրսների բաշխման» ընթացակարգը (Հավելված 7.4)	7
40.	Քոլեջի հաշվապահության կանոնակարգը, / հավելված 2.34	7
41.	Ռեսուրսներով բավարարվածության հարցաշարեր և վերլուծություններ	7
42.	Facebook սոցիալական ցանցի վերաբերյալ հարցումներ և վերլուծություն	8
43.	Պրակտիկայի պայմանագրեր	9
44.	Բոլոր համագործակցությունների հուշագրեր և պայմանագրեր	9
45.	Ներքին գնահատման տեղեկանքի օրինակ	10
46.	Հարցումներ և վերլուծություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Մասնագիտական լաբորատորիաներ և կաբինետներ
- Գրադարան
- Համակարգչային լսարաններ
- Բուժկետ
- Մարզադահլիճ
- Մարզահրապարակ
- Միջոցառումների դահլիճ
- Արխիվ
- Դեղատնային կրպակ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԿՊԲՔ - Կապանի պետական բժշկական քոլեջ
ԿԳՄՄՆ - Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՄԿԾ - Մասնագիտության կրթական ծրագիր
ՄԿՈՒ - Մասնագիտական կրթություն և ուսուցում
ՄՈՒՀ - Մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈՆԱ - Որակի ներքին ապահովում
ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱՇ - Որակավորումների ազգային շրջանակ
ՊԿՉ - Պետական կրթական չափորոշիչ
ՌԾ - Ռազմավարական ծրագիր
ԶՌԾ - Զարգացման ռազմավարական ծրագիր
ՈՒԽ - Ուսանողական խորհուրդ
ՈՒՕ կազմ -Ուսումնաօժանդակ կազմ